

373
5-73

0120-10

373
15-73

ՀՀ ԼՈՒԺ-ՊՐԵՍ

Տարրական յևս սիցակառ դպրոցների վարչություն

373
73

ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

4017

III ՊՐԱԿ

39/553

39/553

- ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ V-VI Գ.Ա.
- ՔԻՄԻԱ. VII-X Գ.Ա.



ՊԱՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1935

01 JUL 2013

51 756

Պատ. Խմբագիր՝ Ա. Ճուղուրյան
Լեզվ. Խմբագիր՝ Հ. Գետրոսյան
Տեխ. Խմբագիր՝ Գ. Զենյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Քլավիս 307, Հրատ. 3503, Պատ դ. 1213, Տիրած 1000
Հանձնված ե արտադրության՝ 25 հոկտեմբերի, 1935 թ.
Ստորագրված ե տպագրելու՝ 20 սուեմբերի, 1935 թ.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(5-9 դասարան)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

1932 թ. ոգոստոսի 2-ին Համեկ(ը)կկ վորոշման ցուցումների հիման վրա կենսարանության ծրագրի մեջ հետևյալ փոփոխություններն են մտցրած.

ա) Ծրագրի ուսուցման նյութի մեջ կատարված ե ներքին վերադասավորում, այնպես, վոր 5-7 դասարաններում մնան բռնապահության հիմունքների նյութը (5-րդ դասարան և 6-րդ դասարանի առաջին կիսամյակը) և կենդանաբանության հիմունքները—եվլուցիոն ուսմունքի տարրերով (6-րդ դասարանի 2 կիսամյակ և 7-րդ դասարան), կենդանիների և մարդու ֆիզիոլոգիայի նյութերը և որդանական աշխարհի գարգացման տեսությունն ամերոջապես տաքված են ավելի բարձր դասարանները։ Դրանով ել ծրագիրը բավականաչափ կրճատված է, վորը հնարավորություն կտա կենսարանության հիմունքներն ավելի լավ և հիմնավոր կերպով յուրացնելու։

բ) Ճշգրտված են կենսարանության աշխատանքների պրոցեսում ողտագործվող սոցիալիստական շինարարության նյութերը։

գ) Բնդարձակված են բուսական ու կենդանական բջիջի և բուսական ու կենդանական բջջային կազմության հասկացողությունները։

դ) Ճշգրտված ե պարտադիր լաբորատոր աշխատանքների, եքսկուրսիաների, բնության և կենդան անկյան դիտումների, դպրոցամերձ հողամասի աշխատանքների մինիմումը։

ե) Տրված են ինքնուրույն ամառային աշխատանքների, դիտումների առաջադրություններ։

զ) Բացի այդ, բուսաբանության ծրագիրը բեռնաթափված ե կողմնակի կոմպլեքս նյութերից (առաջին և վերջին թեման), վորի տեղը մտցված ե բուսական աշխարհի հիմնական խմբերը՝ նոր թեման, 6-րդ և 7-րդ դասարանների ծրագրից կրճատված են դժվար և սակավ մատչելի նյութերը, վորոնց փոխարեն ըն-

գարձակված են յերեխաների տարիքային առանձնահատկություններին ավելի համապատասխան թեմաները (միջատներ, թոշուններ, կաթնասուններ):

Դրանց հետ միասին ճշգրտված են մի շարք բանաձևումներ:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՐՆԹԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5-7 դասարաններում կենսաբանության դասավանդումը պետք է հետապնդի հետեւյալ խնդիրները.

ա) Տալ զիտելիքներ բույսերի և կենդանիների մորֆոլոգիայից, անատոմիայից, բնախոսությունից և սիստեմատիկայից, վորոնք անհրաժեշտ են որգանիզմների զարգացման հիմնական որինաչափությունները հասկանալու և մարդու բնախոսության ու որգանական աշխարհի զարգացման տեսությունների հիմունքների հետագա յուրացման համար:

բ) Սովորողների առաջ բանալ կենդանական և բուսական որգանիզմների պրոցեսների և կյանքի նյութական լինելու, կոնկրետ կերպով ցույց տալ որգանի կազմության և գործունելության կապը, որգանիզմի և շրջապատող միջավայրի կապը: Ցույց տալ կենդանական աշխարհի յուրատեսակությունը. հասկացողություն տալ բջիջի և որգանիզմի բջիջային կառուցվածքի մասին և համեմատական անատոմիայի սաղմնաբանության ու հնիյարանության նյութերի ծանոթության հիման վրա՝ տարրական հասկացողություն տալ որգանական աշխարհի պատմական զարգացման մասին: Հենց դրանով անհրաժեշտ նյութ տալ անհաջող պայքար մղելու կրօնական նախապաշարումների ու սնոտիապաշտությունների դեմ և նպաստել բնության վերաբերմամբ մարքսիստական աշխարհայցք կազմելուն:

գ) Ցույց տալ թե մարդու ինչպես և ազգում բույսերի ու կենդանիների վրա, թե ինչպես մարդու որգանիզմի զարգացման որինաչափության իմացության հիման վրա տիրապետում և բույսերի և կենդանիների բնությանը, և թե «որգանիզմները ղեկավարելու» այդ ձանապարհին ինչ հսկայական հեռանկարներ են բացիւմ բուսաբուծության, անասնաբուծության, ձկնաբուծության և սոցիալիստական տնտեսության այլ ճյուղերում:

կենսաբանական պարագմունքների ընթացքում դասասուն պետք է:

ա) Բույսերի և կենդանիների վերաբերմամբ գիտողություններ ու փորձեր կատարելու ունակություններ տա և սովորեցնի արձանագրել իրենց դիտողությունները — սովորողներին նկարով,

զրելով ու կոլեկցիաներով սիստեմատիկ կերպով վարժեցնելով ինքնուրույն աշխատանքի:

բ) Վարժեցնի դասագրքով ու զրքով աշխատել գիտակցաբար յուրացնի մշակած նյութը:

գ) Աշակերտներին սովորեցնի կենսաբանության ուսումնաասիրության ժամանակ ստացած գիտելիքները գիտակցորեն կիրառել գյուղատնտեսական պրակտիկայի մեջ (գյուղատնտեսական բույսերի և կենդանիների հետ աշխատելու ժամանակ, գյուղատնտեսական վասատուների դեմ ուայքարելիս և այլն):

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

Միջնակարգ գաղոցում կենսաբանական գիտելիքների սիստեմը կառուցվում և այսպիսի հետևողականությամբ. առաջին աստիճանի դպրոցում բնագիտության ընդհանուր տարրական կուրսն անցնելուց հետո, վոր տեղեկություններ և տավս անորգանական ու որգանական բնության մասին (ֆիզիկայի, քիմիայի, հանքաբանության ու կենսաբանության տարրերը), 5-րդ գառանից սկսած տրվում են դիֆերենցիալ բնական գիտությունների հիմունքները, մասնավորապես կենսաբանության հիմունքները:

1. Կենսաբանության կուրսն սկսվում է բօւսաբանությունից, այսինքն՝ բուսական որգանիզմի անատոմիո-բնախոսական ակնարկից ու բույսերի սխտեմատիկայի հիմունքներից: Վերջինս տրվում է պատմական լուսաբանությամբ:

Բուսաբանությամբ և զբաղված հինգերորդ գասարանը և վեցերորդի առաջին կիսամյակը:

Հիմնական բնախոսական պրոցեսների վելուծությունը կապվում է բուսաբանության պրակտիկայի գիտական հիմունքների պարզաբանության հետ: Այս մոմենտը շափազանց կարևոր ե վորպես տեսականի և գործնականի միացման մոմենտ: Ուստի ծրագրի մեջ մտցվում է սոցիալիստական շինարարության նյութը՝ աշակերտների հասկացողությանը մատչելի չափով:

2. Բուսաբանությանը հետեւմ է կենդանաբանության կուրսը՝ կենդանիների կարեւոր խմբերի բնական կլստիքրկացիալի հիմունքների ձևով (վեցերորդ գասարանի յերկրորդ կիսամյակում և յոթերորդ գասարանում): Այս կուրսը հազեցած է եղուցիսին զարգացման գաղափարով, վորի հետ կապված՝ նրա մեջ մեծ տեղ ե բռնում համեմատական անատոմիո-բնախոսական նյութը և յերեխաների հասկացողության մատչելի հնեյարանական և ընդ-

հանուր կենսաբանական եվոլուցիոն նյութը: Որդանական (ժառանակորածես կենդանական) աշխարհի պատմական զարգացման գաղափարներն ավելի լավ յուրացնելու համար, այս կուրսում ուսումնասիրում են այդ տեսակետից ամենակարևոր և միենույն ժամանակ, կոնկրետ ծանոթության համար՝ կենդանական աշխարհի տմենամատչելի խմբերը, սկսած սիարջիջներից և վերջացրած պրիմատներով (ներառյալ): Յոթներորդ դասարանի վերջին դիմում նախապես մշակված նյութի հիման վրա յեզրակացություններ են հանդում որդանիդմների զարգացման հիմնական որինաշափության մասին և ճշգրտվում են փոփոխականության, ժառանգականության, գոյության կովի, ընտրության հասկացությունները (տարրական ձևով): Կենդանաբանության կուրսում թեմատիկայի սերտ կապակցությամբ բացատրվում են սոցիալական տնտեսության մի շարք կարևոր գործնական հարցեր, որինակ՝ պարագիտների և գյուղատնտեսական ֆլաստուների դեմ մղվող պայքարի կենսաբանական հիմունքները և ձկնաբուծության, թռչնաբուծության՝ ընտանի կենդանիների նոր տեսակներ բազմացնելու գիտական հիմունքները:

3. Ուժերորդ դասարանում արվում են մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան, փոր քննարկում և մարդու անատոմիա-բնախռական առանձնահատկությունները՝ կապված նրա աշխատանքային գործունեյության հետ: Այս կուրսը կենդանաբանության կուրսի բնական շարունակությունն և և մեծ չափով հիմնվում է են յոթներորդ դասարանում: Միաժամանակ նա նյութ և տալիս—հաջորդ տարին եվոլուցիոն տեսության ուսմունքի կուրսում մարդու ծագման հարցը լավ յուրացնելու համար:

4. Իններորդ դասարանում ուսումնասիրում են եվոլուցիոն ուսմունքի հիմունքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Վորպեսդի աշակերտները կենսաբանությունն ավելի լավ և յին նյութի բովանդակության սիստեմատիկ և հետեղական մշակերպել, այն ե՛ փորձեր անել կենդանիները հերձելու—մանրագիշություններ կազմատական պարապմունքներ կազմատական պարապմունքների համար:

Նա պետք է մի շարք եքսկուրսիաներ կատարի գեղի բնությունը, գյուղատնտեսական արտադրությունը, գործարան ու թանգարան: Նա պետք է ուսումնական-գյուղատնտեսական աշխատանք կազմակերպի գյուղացամերձ հողամասում, կամ շրջանային ազգայի գրուցյալ կազմակերպել, աշակերտների գիտելիքները խորացնելու և ամրապնդելու համար ոգտագործել գյուղացիներն ու գիրքը, փորձերի ցուցադրումը, կոլեկցիաները, զանազան ուսումնա-գիտառական պարագաներ, աշակերտներին արվելիք բնական նյութը, մոգական լապտերը, կինոն և այլն, կենսաբանության գանազան միջոցներ ու տաղործելով միայն կեատարի խորհրդային պոլիտեխնիկ գոլրոցի կենսաբանության կուրսի առջև դրված խնդիրները:

Հենց այդ նպատակով ել պետք է հրահրել աշակերտների ինքնուրույն աշխատանք՝ պատանի բնասերների, պատանի փորձարարների (բուսաբուծների), բնության պատանի հետախույզների խմբակներ կազմակերպելու միջոցով, ամեն կերպ ողնելով նրանց ինքնուրույն աշխատանքին, լայն կերպով գործազրելով բոլոր աշակերտներին առաջադրանքներ տալը՝ կենդանիների և բույսերի վրա փորձ ու գիտողություններ անելու և կենսաբանական հավաքածուներ ժողովելու համար:

Մեծ նշանակություն ունեն աշակերտների ամառային ինքնուրույն գիտողություններն ու աշխատանքները բնության մեջ և գոլրոցամերձ հողամասում:

Դասատուն պետք է նախապես նրանց նախապատրաստի: Ամառը կատարելու համար պարզ ու մեկն արված, մատչելի հետաքրքիր առաջադրություններն աշակերտներին կողնեն ծանոթանալու բնության այնպիսի յերեսույթների, փորոնք գոլրոցական աշխատանքի պայմաններում հաճախ անմատչելի յեն անմիջականորեն ծանոթանալու համար: Ամառը ճամբարում, գյուղում կամ գոլրոցամերձ հողամասում աշտկերտները բազմաթիվ արժեքավոր գիտողություններ, գրանցումներ, նկարներ կանեն ու հավաքածուներ կպատրաստեն: Աշնանն անհրաժեշտ է հանրագումարի բերել ամառը կատարած աշխատանքը, իսկ հավաքած ու մշակած նյութը ձեավորել իրեւ ամառային աշխատանքների ցուցանադես: Այդ նյութերը պետք կպան և հետազում լաբորատոր պարապմունքների համար:

Դրա հետ միասին անհրաժեշտ է ամենակարծ ժամանակում գերջ տալ աշխատանքի մեթոդների այն աղավաղումներին, վարոնք գեռես գոյություն ունեն գոլրոցում:

Ամենից առաջ անհրաժեշտ ե վճռական պայքար մզել կենասաբանության, բացառապես խոսքի—գրքի միջոցով կատարվող սխոլաստիկ դասատվության դեմ, վոր դիտությունը կարում ե կյանքից ու սոցիալիստական շինարարությունից:

ՈՒՍՈՒՄՆԱՌԱՅՈՒԹՅԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ

Կենսաբանության դասավանդությունը ձիւտ գնելու համար անհրաժեշտ ե դպրոցին կից ունենալ կենսաբանական լաբորատորիա՝ համապատասխան կահավորությամբ, գործիքներով ու նյութերով։ Կենսաբանության դասառուն աշակերտների ոգնությամբ գործնական աշխատանքների համար ժամանակին պետք է պատրաստի բաշխելիք նույթը (սերմեր, հողի տեսակներ, զանազան բույսերի հերթարիում, բույսերի մասեր, միջամտների, մանր կենդանիների, բրածոների և այլ հավաքածուներ):

Կենսաբանական լաբորատորիայի անհրաժեշտ բաղկացուցիչ մասը պետք է կազմի կենդան ամպունք, վոր իր մեջ պետք է պարունակի կենդանի կուլտուրական (դրանց թվում նաև սենյակի) ու վայրենի բույսեր (դրանց թվում նաև մոլախոտեր), դրանց աճման զանազան շրջաններում՝ յերկարատև փորձեր ու դիտողություններ կատարելու համար, ինչպես՝ ակվարիուններ, տերրարիուններ, ինսեկտարիուններ, վանդակներ, վոլյերներ—կենդանիներ տեղափորելու համար, կենդան անկյուն կազմակերպելու և պահպանելու գործին այնպես յերկարատև փորձեր ու դիտողություններ դնելու գործին պետք ե մասնակից դարձնել հետաքրքրվող աշակերտներին—պատասխի բնագետներին։

Բացի այդ, դպրոցը բացողյա լաբորատորիա—ուսումնական դպրոցամերձ նոյնական պետք ե ունենա՝ բուսաբուծական և անասնաբուծական բաժիններով։ Այնազ, վորտեղ դպրոցներին կից հողամասեր չկան, պետք ե մի քանի դպրոցներ միանան՝ համաշրջանային կամ յենթաշրջանային ազգորազա ստեղծելու համար։ Դպրոցական հոյամասի վրա աշակերտները, կենսաբանության ուսական աշխատանք պետք ե կատարեն, ուսումնական գյուղատնտեսերի ու կենդանիների վերաբերմամբ փորձեր անեն, կենսաբանական դիտողություններ կատարեն և վերջիններս դրանցն ու

Բնական ե, վոր գարնան ու աշնան աշխատանքը կենտրոնանում ե գլխավորապես բուսաբուծական բաժնում, իսկ անառ-

նաբուծական բաժինը (ճագար, ընտանի թոչուններ) կարող են ոգտագործվել ամբողջ տարվա ընթացքում։

Նույնպես դպրոցական հոդամասումն ե հիմնականում մշակվում գյուղատնտեսական աշխատանքի ծրագիրը։ Այսուղեղ կենտրոնանում ե ավելի շատ հետաքրքրվող աշակերտների՝ պատանի փորձարարների արտադպրոցական ինքնուրույն աշխատանքը։ Այդ հատուկ նշանակություն կունենա ամառը՝ ամառային առաջադրություններ կատարելու համար։ Կենսաբան դասառուն աշխատանքը պետք ե այնպես կազմակերպի, վոր յերեխանների համար գրավիչ դարձնի։

Դպրոցական եքսկուրսիաներն ավելի արդյունավետ դարձնելու համար՝ էկսատուն պետք ե կապվի շրջակայքի գյուղատնտեսական ու գործարանային ձեռնարկությունների, տեղական թանգարանների, լաբորատորիաների և հետազոտական հիմնարկների հետ։ Այդ անհրաժեշտ կլինի կ լաբորատորական աշխատանքների այն ձեռները կարգավորելու համար, վոր մասսայական դպրոցի պայմաններում քիչ մատչելի յեն, այսպես, որինակ, մի շարք արտադրական ձեռնարկություններում և հետախուզական հիմնարկներում կարելի յե ցուցագրությունների և լաբորատորական կուտնարկների համար նյութեր ստանալ (բամբակի և այլ թելարույսերի նմուշներ, զանազան մորթի, բուրդ, հումույթ և կիսափարթիւնաբանների զանազան տեսակներ կոլտնտեսություններում կամ խորհնատեսություններում սերմեր, կուլտուրական բույսերի նմուշներ և ուրիշ շատ բաններ)։

Դասառուն բնական ու գյուղատնտեսական շրջապատը լավ պետք ե ուսումնասիրի՝ եքսկուրսիաների ժամանակ այն առավելագույն չափով ոգտագործելու համար։

Մեծ նշանակություն կունենան գլխուցական կինոն, ծրագրի թեմատիկային համապատասխան ընտրովի ժապավեններ ունենալու գեղքում,

Այնազ, ուր հնարավոր ե, պետք ե ոգտագործել մոգական լապտերը՝ ալոսկոպ-դիտպողիտիվներ ցույց տալու համար։

Թ Բ Ա Գ Ի Թ

ՀԵՆԴԵՐՈՒԴ ԴԱՍԱՐԱՆ (97 ԺԱՄ)

ԲՈՒԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Բուսաբանությունը գիտություն են բույսերի կազմության ու կյանքի մասին: Բուսաբանությունն ի սպաս սոցիալիստական շինարարության:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ
ՄԱՍԻՆ (6 ԺԱՄ)

Ծաղկավոր բույսերի գործարաններ՝ արմատ, ցողուն, տերև, ծաղիկ: Ծաղկավոր բույսերի արտաքին կառուցվածքի որբնականեր (կենդանոբյեկտի վրա) (9 ժամ):

Բույսերի բջիջային կազմությունը: Հասկացողություն բուսական բջիջի մասին (թաղանթ, պրոտոպլազմա, կորիզ, վահկուրներ, բջջանյութ): Հասկացողություն հյուսվածքի մասին (4 ժամ):

Լաբորատոր պարագամունք. 1) Ծաղկավոր բույսերի արտաքին կառուցվածքի ուսումնասիրությունը; 2) Ծանոթություն բույսերի բջիջային կազմությանը (աշխատանք խոշորացույցով): Մանրադիտակով ցույց տալ բուսական բջիջներ ու հյուսվածքներ (սոխի թաղանթ):

ՍԵՐՄ, ՆՐԱ ԾԼԵԼԸ ՅԵՎ ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ
ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ (11 ԺԱՄ)

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի կազմությունը: Սերմերի բաղադրությունը (սոլա, սպիտակուց, ձարպ, ջուր և հանքային նյութեր), ուղայի հատիկները շաքիլների բջիջների մեջ: Սերմի և նրա մասերի փոփոխությունը ծլելու ժամանակ: Սերմի մեջ ամբարված սննդանյութերի նշանակությունը բույսի

զարգացման համար: Սերմի ծլելու անհրաժեշտ պայմանները՝ խոնավություն, ջերմություն, (ոպտիմում, մինիմում, մաքսիմում) ողի թթվածին:

Հասկացողություն կենդանությանի մասին կազմության մասին: ծլող սերմի ջնշառությունը: Հասկացողություն սերմի պաշարը պահպանելու անհրաժեշտ պայմանների մասին: Սերմի աղտոտության ու ծլունակության վորոշման նշանակությունը բերքադաշտյան համար մղվող պայքարում:

Լաբորատոր պարագամունք 1) Ծանոթություն սերմերի կազմության, 2) Ալյուրի պարզ անալիզը, 3) Ճարպերի հայտնաբերումը սերմերի մեջ, 4) Սերմացիվ աղտոտվածության բուսաբանական բնութագրումը:

ԴԻՑՈՒՄՆԵՐ ԿԵՆԴԱՆ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ ՅԵՎ ՑԱՆՔ

1) Սերմը ծլեցնելը և ծլունակության տոկոսը վորոշելը:

2) Դիտումներ ծիլի զարգացման վրա:

Ուժական բուսաբանությունը հողից, ենրգործումը հողի վրա գյուղատնեսության մեջ (13 ժ.):

Հողի համառոտ բնութագիրը, վորպես կանաչ բույսերի աճման միջավայրի: Արմատի արտաքին կազմությունը: Ծայրապատյան և մազարմատներ: Արմատային սիստեմների տեսակները: Արմատի ներքին կազմությունը: Մազարմատի մանրադիտական կազմությունը: Արմատի լուծիչ ազդեցությունը: Հասկացողություն ուսմոսի մասին: Ջրի ներս ծծվելը: Հանքային սննդառու աղերի ծծվելը հողից արմատի մեջ: Փորձեր, վորոնք կպարզեն, թե վիր նյութերն են առանձնապես անհրաժեշտ բույսի հաջող աճման համար: Ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակող հանքային նյութերը, Հասկացողություն ջրային և ավագային կուտարաների մասին: Հողի պարագաման ու մշակման նշանակությունը բերքադաշտյան բարձրացման գործում: Արմատի աճումը: Արմատի աճման գոտին (կետը): Աճման նշանակությունը: Արմատների ջնշառությունը: Արմատի կազմության ու միջավայրի պայմանների մեջ յեղած կապը:

Ցուցադրում. Արմատի և մազարմատի կազմությունը մանրադիտակի տակ: Փորձի ցուցադրում: Հեղուկների ոսմոսը:

Դիտումներ կենդանանկյունում արմատի աճման վրա: Փորձեր դնել ջրային և ավագային կուտարաների վրա:

Տերեւ. Սննդառություն ողից: Զրի գոլորշիացումը Տերեվների միոցով (15 ժ.):

Տերեւի բջջային կազմությունը: Տերեւի հյուսվածքները՝ մաշկ, փափուկ մաս և անոթաթելային խուրձեր: Տերեւի փափուկ մասի բջջային կազմության առանձնահատկությունները: Քլորոֆիլի հատիկներ, Հերձանցքեր: Ածխաթթու դազի քայլայումը կանաչ բույսի կողմից՝ լույսի տակ: Ածխածնի յուրացումը տերեների կողմից: Ածխածնի յուրացման արտադրանքները (ածխաջրեր՝ ոսլա, շաքար): Լույսի և քլորոֆիլի հատիկների գերը ոսլա առաջացնելու գործում: Կանաչ բույսերի առողջարար նշանակությունը:

Կիսապարագիտ, պարագիտ ու միջատակեր բույսերի սննդադրության առանձնահատկությունները: Տերեւի գերը բույսի շնչառության գործում: Ջրի գոլորշիացումը տերեների միջոցով: Գոլորշիացման հարմարանքը: Հերձանցքների գերը բույսի կյանքում: Տերեւի ձեր և բույսի կենսաբանական առանձնահատկությունների կապը:

Ցուցադրել. 1) Թթվածին և ածխաթթու գաղերի հատկություններ պարզաբանող փորձեր: 2) Տերեւի մանրաղիտակային կազմությունը: 3) Կանաչ բույսերից լույսի տակ թթվածին արտադրվելու փորձեր:

Լաբորատոր աշխատանք. Տերեների մեջ ոսլա առաջանալու պայմանների պարզաբանում:

Դիտումներ կենդան անկյունում և տանը. 1) Տերեների միջոցով ջրի գոլորշիանալու փորձեր: 2) Փորձեր կանաչ բույսի շնչառության վերաբերյալ:

Յողութ. Զրի լեկ սննդանութերի շարժումը ցողունի միջով (8 ժամ):

Մառաբույսի ցողունի կազմությունը, բողբոջների դասավորությունը և նրանց կազմությունը:

Բողբոջների դերը բույսի կյանքում: Ցողունի կազմությունը (ծաղկաբույսի որինակի վրա):

Կեղեկամրիում, բնափայտ, ծուծ: Ցողունի բջջային կազմությունը, Անթաթելային խուրձեր: Հիմնական, հաղորդիչ, մեխանիկական և պաշտպանողական հյուսվածք: Մառի աճումն ըստ բարձրության: Ածման կոն: Հասկացողություն բջիջների բաժաների մասն և աճման մասին: Մառի աճումն ըստ հաստության: Կամքիումի նշանակությունը: Միաշաքիլ բույսերի ցողունի կազմության առանձնահատկությունները: Ցողունի գերը բույսի կրանքում: Վերելակ հոսանք, Տերեների միջոցով ջրի գոլորշիացման և արմատային ճնշման նշանակությունը գերելակ հոսանք առա-

ջացնելու գործում: Վարիջակ հոսանք: Զլուծվող որգանական նյութերի փոխարկումը լուծվող նյութերի (ոսլան շաքարի):

Ցողունի ձևափոխումները՝ կոճղարմատներ, պալարներ, սուխուներ (կոճղեա): Նրանց կազմությունը և կենսաբանական նշանակությունը: Վերերկրյա ցողունների ձևափոխումները՝ բույսի կենսաբանական առանձնահատկությունների հետ կապված:

Ցուցադրում. 1) Անման կոնի մանրադիտակային կազմությունը (ելողեա): 2) Լորենու ճյուղի մեկ և յերկու տարեկան ցողունի մանրադիտակային կազմությունը (ըստ յերկայնքի և ըստ լայնքի հատվածներ):

Լաբորատոր աշխատանքը մունքների գասալորությունն ու նրանց կազմությունը և վոստի տարիքը վորոշելու ուսումնասիրություններ: 2) Ցողունի մանրադիտակային կազմությունը՝ կեղեկ, կամբիում, բնափայտ, ծուծ: Նյութատար ուղիների հայտնաբերում ցողունի մեջ: 4) Կոճղարմատի, պալարի և սոխուկի կազմությունը:

Դիտումներ կենդան անկյունում և տանը 1) Ցոստի ճյուղավորման բողբոջների գասալորությունն ու նրանց կազմությունը և վոստի տարիքը վորոշելու ուսումնասիրություններ: 2) Ցողունի մանրադիտակային կազմությունը՝ կեղեկ, կամբիում, բնափայտ, ծուծ: Նյութատար ուղիների հայտնաբերում ցողունի մեջ: 4) Կոճղարմատի, պալարի և սոխուկի կազմությունը:

Դիտումներ կենդան անկյունում և տանը

1) Ցոստի բողբոջների բացվելը, 2) սոխուկի և կոճղարմատի զարգացման դիտումը:

ԾԱՂԻԿ, ՊՏՈՒՀ, ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ

ԲԱԶՄԱՑՈՒՄԸ (12 ԺԱՄ)

Սեռական բազմացում, ծաղկի կազմությունը: Փոշտման ու բեղմանվորման եյությունը: Հասկացողություն սեռական բազմացման մասին: Խաչաձև փոշտման նշանակությունը: Խաչաձև փոշտման որինակները բնության մեջ: Միջատների ու քամու միջոցով փոշտվող բույսերը ինքնափոշտման որինակները:

Ծաղկափթթություն: Պտղի առաջանալը: Պտուղների տեսակները: Պտուղների ու սերմերի տարածվելը: Խաչաձևման նշանակությունը նոր տեսակ ստանալու գործում:

Վեգետատիվ բազմացում: Բազմացումն արմատների, ցողունների և տերեների ողնությամբ: Բույսերի բուժումն անդամիսի, կտրոնների և պատվաստի միջոցով:

Խաչաձևման յեղանակները (կենդան նմուշներ, նկարներ) և ստացած նոր տեսակները (յեթե հնարավոր են կենդան նմուշներ, մողեներ, նկարներ):

Վեգետատիվ բազմացման միջոցները: Կարոններով (կտրած վոստ) բազմացնելը և պատվաստելը:

- Հաբորատոր աշխատանք՝ ծաղկի կազմությունը:
Դիտումներ կենդան անկյունում և տանը.
1) Ծաղկի զարգացումը, պաղի առաջանալն ու զարգացումը;
2) Դպրոցական բուսաբանական պարտեզի հիմնադրումը:

ԲՈՒԺՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (6 ԺԱՄ)

Բույսի զարգացման վեգետացիոն շրջանը: Աճման յերեցութը: Արմատի, ցողունի և տերեկի աճման առանձնահատկությունները:

Բարեխառնության, խոնավության, լույսի և հողի սննդայութերի ազդեցությունն աճման վրա: Բույսի սեռական զարգացման շրջանը: Բազմարջիղ բույսի զարգացումը ձվարջշից: Ծաղկավոր բույսերի զարգացման շրջանները: Միամյա, յերկամյա և բազմամյա բույսեր: Բույսերի զարգացման կարգավորումը: Յարովիդացիալի (գարնանացանի) նշանակությունը: Ցուցաբումը բույսի զարգացումը ցույց տվող կենդան և հերբարիալ նմուշների, նույնական և նկարների:

Դիտումներ և փորձեր կենդան անկյունում, վարոնք պարզանում են բարեխառնության, խոնավության, լույսի և հողի սննդանութերի ազդեցությունը բույսերի զարգացման վրա:

Եքսկուրսիա գեղի ջերոցային տնտեսություն՝ բույսերի զարգացումը կարգավորելու յեղանակները ցույց տալու համար:

ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՎՈՒԹՅՈՒՆԸ (2 ԺԱՄ)

Ցուցումներ վորոշ բուսեր ժողովելու և դրանց չորացնելու (հերբարիզացիա) յեղանակների վերաբերյալ:

ԴՅՈՒՂԱՏՆԱԿԱՆ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆՆԵՐ ՑԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ԴՊՐՈՑԱՄԵՐՉ ՀՈՂԱՄԱՍՈՒԻՄ ՔԱՂԱՔԻ ԴՊՐՈՑՈՒՄ (17 ԺԱՄ)

Բաղաքի դպրոցն ըստ աշխատանքի ծրագրի գյուղատնտեսության հատուկ դասընթաց չունի: Ուստի քաղաքի դպրոցում բուսաբանության դասընթացն անհրաժեշտ և կապել գյուղա-

շարք եքսկուրսիաներ և դպրոցամերձ հողամասում աշխատանք՝ ներ կազմակերպելով:

Զափաղանց անհրաժեշտ և գյուղատնտեսական փորձարարների խմբակների կազմակերպումը:

Ծրագրի «Առ բար» հատվածն անցնելու ժամանակ անհրաժեշտ և եքսկուրսիա կատարել կամ դեպի տեղական թանգարանի ներին ձանոթացնելու համար սերմերի զում, տեսակավորման և աղտահանման տեխնիկայի հետ (2 ժամ): Եքսկուրսիայի տված նյութերի ամփոփման համար պահանջվում է ևս մեկ դաս և ընդամենը 3 ժամ:

«Առ բար» թեման ուսումնասիրելու ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել բույսի սննդառության վրա՝ հողից: Մասնավորապես աշակերտներին պետք է ցույց տալ վեգետացիոն փորձեր դնելու տեխնիկան և հանքային պարարտանյութերի նմուշները: Ծանոթություն հողի մշական գյուղատնտեսական գործիքներին: Հողի պարարտացման և մշակման նշանակությունը ցանկալի յե պարզել եքսկուրսիա կատարելով դեպի գյուղատնտեսական թանգարան: Ընդամենը 4 ժամ:

Վաղ գարնանը հինգերորդ դասարանում պետք է եքսկուրսիա կազմակերպել գեղի քաղաքամերձ ջերմոցային տնտեսություն, գյուղատնտեսական աշխատանքներին ապակեծածկ հողամասում աշակերտներին ձանոթացնելու համար, և ցույց տալու, բույսի զարգացման համար տեխնիկական «ղեկավարման» յեղանակները (2 ժամ): Այս նյութը ճշգրտվում է դասի ժամանակ (1 ժամ), Ընդամենը 3 ժամ:

Գարնանը պարոցամերձ հողամասում կամ շրջանային դպրոցական ագրոբազայում խմբակային պարագմունքների կարգով պետք և կազմակերպել գյուղատնտեսական կուլտուրաների հավաքածու (հացաբույսերի, բուրառյաների, արմատապուղների և թելատու, յուղատու, կառչուկաբեր, գեղատու բույսերի) և պարարտացման հասարակ փորձեր դնել: Դրա համար գարնանային սեղոնին զպրոցամերձ հողամասում պետք և կազմակերպել հետական գործնական աշխատանքներ: 1) Հողի մշակում (բահով, փողխով). 2) պարարտացում (հանքային և որգանական): Այս աշխատանքների կապակցությամբ շատ կարևոր է վաղ գարնանը վեգետացիոն փորձեր դնել (ավաղային և ջրային կուլտուրաներ):

3) Յանք և սածիլում: Գարնանային պրակտիկ աշխատան
ների համար ընդամենը 8 ժամ:

Ստուգումների ժամանակ գյուղատնտեսական աշխատան
ները շարունակվում են խմբական պրապմունքների կարգով.
Ամառվա ընթացքում մանկավարժի ղեկավարությամբ դիտողու-
թյուններ են կատարվում արված փորձերի վերաբերմամբ, գրան-
ցումներ ու նկարություններ են կատարվում ու հավաքածուներ են
պատրաստվում: Քաղաքից հեռացած աշակերտներն ինքնուրույն
ամառային առաջադրանքներ են կատարում: Արկնուրյուն 6 ժամ:

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԱՄՄԱՆ
(78 ԺԱՄ)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (6 ԺԱՄ)

Տարվա սկզբին ամառային աշխատանքները հանրագումարի
ընթացքում ժամանակ հաշվառման են յենթարկվում դպրոցամերձ
հողամասում արված փորձերի հետևանքները (3 ժամ):

Անհրաժեշտ ե մի շարք գրույցներ անցկացնել՝¹⁾ բերքատը-
վության բարձրացման հիմնական ուղիների մասին, կանգ առ-
նելով գյուղատնտեսության մեքենայացման նշանակության վրա,
2) պարարտացման նշանակության, 3) մոլախոտերի գեմ պար-
քարելու և 4) տեսակավոր սերմերի նշանակության մասին:

Անհրաժեշտ ե առանձնապես ընդգծել խոշոր սոցիալիստա-
կան գյուղատնտեսության դերը բերքատվության բարձրացման
խնդրում (5 ժամ):

ԲՈՒԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (42 ԺԱՄ)

Բուխակոն աշխատի նիմնական խմբերը (հասկացողություն
բուխերի կարգաբանության մասին (20 ժամ):

1-ին բաժին՝ ստորակարգ սպորատությունը բուխերի
Բակտերիաներ—մանր, փոչ կանաչ բուխեր:

Զրմուռները փորպես կանաչ բուխերի ամենահին խումբ:
Քաղցրահամ ջրերի ջրմուռներ (միարջիջ և բազմարջիջ): Նրանց
կազմությունը և կյանքը: Հասկացողություն միարջիջ բուխական
որդանիզմի մասին: Ծովային գորշ և կարմիր ջրմուռները և
նրանց ոգտագործումը ժողովրդական անտեսության մեջ:

Սունկեր՝ անքրոբիկ բուխեր: Ստորին սունկերի կազ-

թյունը: Սունկերի սննդառության, բազմացման առանձնա-
կությունները: Դաշտային սունկերի բուծումը: Պարագիտ
նկեր: Սունկերի ծագումը:

Քարախոսեր, նրանց կազմության առանձնահատկությունը:

2-րդ բաժին՝ բարձրակարգ սպորատությունը բուխեր:

Մամուռները վորպես ցամաքային բուխերի ամենահին խրմ-
բերից մեկը: Մամուռների կազմության պարզությունը ծագկա-
վոր բուխերի հետ համեմատած (սիզոփներ, վորոշ մամուռների
ցողունի բացակայությունը): Մամուռների բազմացումը և զար-
գացումը: Տորֆամամուռներ և տորֆի զոյցացումը:

Զարխոսանալուներ (ձարխոտեր, ձիածեաներ, գետնամուշկ-
ներ (սպորատությունների մեջ ամենաբարդն են) ունեն ցողուն
տերմներով և խմական արմատներ): Զարխոտերի բազմացումը
և զարգացումը: Բրածո ձարխոտեր, ձիածեաներ և գետնամուշկ-
ներ: Քարածխի զոյցացումը:

3-րդ բաժին՝ ծաղկավոր բուխերը:

Մերկապերմեր: Սոճին վորպես մերկասերմերի որինակ: Սոճու
կհնաբանությունը: Ծաղկի կազմության առանձնահատկությու-
նը: Մերկասերմերի ծագումը:

Խածասերմեր: Ծաղկավոր բուխերը, վորպես բուսական
աշխարհի նորագույն խումբ: Նրանց ձերի բազմազանությունը
և հարմարվածությունը գոյության տարբեր պայմաններին: Կուլ-
տուրական ծաղկավոր բուխերի ծագումը:

Յուղատերմեր: Յուղատերմերը՝ բակտերիաների, ջրմուռների, սունկերի,
քարաքոսների, մամուռների, ձարխոտանմանների, մերկասերմերի և
ձածկասերմ բուխերի:

Մանրատիտակաների, բակտերիաների, սունկերի,
կելանման ջրմուռներ, սունկերի միցելաներ և սպորներ, մամուռ-
ների սպորներ, մատմուռների, ձարխոտերի սպորներ և
սպորներով լի սպորապարկերը, ձարխոտի նախածիլը. սոճու
ծաղկափոշին:

Յուղատերմերը՝ բակտերիաների, ջրմուռների, սունկերի,
քարաքոսների, մամուռների, ձարխոտանմանների, մերկասերմերի
և ձածկասերմերի նկարներ:

ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՈՒԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՑՆ ԲՆՏԱՆԻՔՆԵՐԸ (22 ԺԱՄ)

Հասկացողություն բույուերի կարգաբանության մասին. Ծանո-
թություն ծաղկավոր բուխերի հետեւալ ընտանիքների ներկա-



լացուցիչներին, նրանց կենսաբանական առանձնահատկություններին և անտեսական ոգտագործմանը:

1-ին դաս—յերկշաբանիավորներ: Յենքաղաս Ա. բաժնապսակարգեավորներներ: Ըստանիքները՝ 1) գորտնածազիկներ, 2) խաշածաղիկներ, 3) վարդածաղիկներ, 4) լորաբույսեր, 5) հովանոցավորներ, 6) ուռազգիներ: Յենքաղաս Բ. ամբողջապատկարեցավորներ: Ըստանիքներ՝ 1) մորմազգիներ, 2) շրթնածաղիկներ, 3) բարդ ծաղկավորներ:

2-րդ դաս՝ միաւաճիլալիցներ: Ըստանիքներ՝ 1) շուշանազգիներ, 2) հատիկաբույսեր:

3-րդ դաս՝ մաղկավոր բույսերի կարեռագույն ընտանիքների ներկայացուցիչները:

Լաբորատոր ծանոթություն. ծաղկավոր բույսերի ծաղկի և մյուս գործարանների կազմությանը (կարեռագույն ընտանիքների):

Պրակտիկա. ծաղկավոր բույսերը վորոշելու:

Կազմակերպի անկյուն բույսերի կարգաբանության վերաբերյալ:

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (30 ԺԱՄ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (3 ԺԱՄ)

Կենդանաբանությունը գիտություն և կենդանիների մասին, վորն ուսումնակարում և նրանց բազմազան կազմությունն ու կյանքը՝ կապված նրանց գոյության փոփոխվող պայմանների հետ: Կենդանիների բրածո մնացորդները վորպես ապացույց կենդանական աշխարհի զարգացման յերկարատև պրոցեսի: Հասկացողություն յերկարաբանական նստվածքների և ժամանակակից ժամանակական մասնակիություն:

Կենդանիների սիստեմը վորպես արտահայտություն կենդանական ձևերի միասնական ծագման և նրանց տարբեր աստիճանի ցեղակցության: Հասկացողություն կարգաբանական հիմնական միավորների մասին՝ կենդանական աշխարհի բաժնումը խմբերի (տիպար, դաս, կարգ): Կենդանական տեսակ: Մոտ տեսակները միացվում են՝ կազմելով ցեղ, մոտ ցեղերը՝ ընտանիք և այլն (կոնկրետ որինակներով):

Կենդանաբանական գիտելիքների նշանակությունը մեր յերկրի բնական հարստությունների տիրապետման խնդրում: Եքսկուրսիա դեպի տեղական թանգարանի յերկարանական բաժինը:

ՆԱԽԱԿԵՆԴԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՏԻՊԱՐ (7 ԺԱՄ)

Նախակենդանիների ընդհանուր գծերը, վորպես միաբջիջ կենդանիների. ասյօրայի կամ պարամեցիումի (հողաթափիկ) որինակի վրա: Նրանց կազմությունը (պրոտոպլազմա, կորիզ, պարունակություն) և կենսական գործողությունները (շարժում, մնվելը, շնչառություն, արտաթորություն, զգացողություն, պազմացում):

Նախակենդանիների բազմազանությունը: Հասկացողություն կենդանիների և բույսերի սահմանների միջև գտնվող նախակենդանիների մասին, մարակավորների դասը (կանաչ եղջենա) և նրանց նշանակությունը ամբողջ որգանական և աչքաբանի միասնականությունը հաստատելու համար: Կեղծոտանիների դասը (ամյորաներ, խեցիավոր նախակենդանիներ):

Ինֆուզորիաների դասը, վորպես ամենաբարձր դաս՝ նախակենդանիների մեջ:

Ժամանակակից նախակենդաները վորպես հետեանք միաբջիջ որգանիզմների զարգացման յերկարատև պրոցեսի: Նախակենդանիների դերը ապահների (լեռնատեսակների) զարգացման մեջ (կավիճ, կըաքար): Կենդանիների և մարդկանց հիվանդություն առաջանող նախակենդանները և դրանց կենսաբանական կապը վորոշ կենդանական ձևերի հետ (մալրիայի պարագիտը):

Լաբորատոր պարագաներ պահպան մոււնք. 1) մանրադիտակով դիտել ինֆուզորիաներ, 2) մանրադիտակով գիտել կավիճ (բնական կավիճ): Դիտել նախակենդանիների վերաբերյալ կինոժամանական մասնակիությունը:

ԱՆԱԴԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (6 ԺԱՄ)

Անապիների ընդհանուր բնութագիր՝ վորպես ստորակարգ բազմաբջիջ կենդանիների: Քաղցրահամ չրի հիդրան վորպես ներկայացուցիչ հիդրածե պրիմիների: Հլորայի կազմությունը, հյուսվածքների զիֆերենցիցիցի սկիզբը: Հլորայի կենսակերպը, Բազմացում՝ անսեռ և սեռական: Կորցրած մասերի վարկաննման խիստ արտահայտված ընդունակությունը (ուզեներացիան)՝ կապված նրա մարմնի կազմության հարաբերական միակողմանիության հետ:

Ծովային պոլիպներ և մեկուզաներ: Մեղուզայի զարգացումը պրիմիպից և նրա մարմնի կազմության բարդացումը նրա ինքնուրույն կյանքի անցնելուց հետո:

Կորալյան պոլիպների դասը: Կրային կմախքի նշանակու-

թյունը նրանց ալիքահար շրջանում (ափերի մոտ) ապրելու կապակցությամբ, կորալների դերը յերկագնդի կեղեի գոյացման պրոցեսում:

Սանրավորների դասը, վորպես անաղիների հատուկ խոռումը, վորոնք ազատ լողացող կյանք են վարում և պահպանել են թարթիչներով շարժվելու ընդունակությունը:

Լաբորատոր պարագանք մուռնք. 1) դիտել կենդանի հիգրան (կերակրել, դիտել խոշորացույցով). 2) փորձեր սեղեներացիալ վերաբերյալ:

ՍՊՈՒՀՆԳՆԵՐԻ ՏԻՊԱՐ (1 ԺԱՄ)

Սպուհների բազմազանությունը, նրանց կաղմությունը նստակյաց կյանքի կապակցությամբ:

Սպուհների և անաղիների ցեղակցությունը գաղոթային մտքավորների հետ:

Բաղմաբջիջ կենդանիների զարգացման միաբջիջ ստաղիան:

ՎՈՐԴԵՐԻ ՏԻՊԱՐ (9 ԺԱՄ)

Վորդերի ձեերի բազմազանությունը, վորդերի տիպարի բաժանումն առանձին յենթատիպարների:

Տափակ վորդերի յենթատիպարը, նրանց ընդհանուր բնութագիրը: Թարթիչավոր վորդեր (պլանարիներ): Թարթիչավոր վորդերի և սողացող սանրավորների կապը: Պարագիտ տափակ վորդեր (լարգային ծան, յերիզորդ, եխինոկոկ): Դրանց զարգացման առանձնահատկությունները: Տերերը փոխելու և դրա կենսարանական նշանակությունը: Առ պարագիտների դեմ պայքարությունը կենսարանական հիմունքները:

Կոր վորդերի յենթատիպար: Ասկարիս, տրիխինա, կազմության զիսավոր առանձնահատկությունները՝ կապված դրանց պարագիտային կյանքի հետ: Վարակման միջոցները և կանխիչ միջոցների կենսարանական հիմունքները վարակման դեմ:

Ողակափոր վորդերի յենթատիպար: Անձրեռը վորպես այդ յենթատիպարի ներկայացուցիչ: Նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված նրա կենսակերպի հետ: Անձրեռը նշանակությունը հողագոյացման պրոցեսում:

Համառոտ տեղեկություններ ազրուկի կաղմության կենսակերպի մասին: Ողակափոր վորդերի ներկայացուցիչների ավելի բարդ կաղմության հատկանիշներ (հյուսվածքների, փորձարանների սիստեմների գիֆերենցիալիան):

Վորդերի ծագումը հին է: Պարագիտ վորդերի կազմության պարզացումը և նրանց սերնդի շարունակությունն ապահովող հարմարանքի բարդությունը, վոր առաջացել և նրանց զարգացման պատմական պրոցեսի հետեւանքով:

Լաբորատոր պարագանք մեխանիզմը. 1) դիտել կենդան անձրեկորդ (նրա շարժման մեխանիզմը). 2) հերձել անձրեկորդը:

ՓԱ.ՓԿԱ.Մ.Ա.Բ.Մ.Ի.Ն.Ե.ՐԻ ՏԻՊԱՐ (4 ԺԱՄ)

Անատամը վորպես փափկամարմինների տիպարի ներկայացուցիչ, նրա կազմությունը՝ կապված նրա կենսակերպի հետ:

Թերթախոփկների դասի ընդհանուր գծերն՝ անատամի որինակի վրա. դրանց մի քանի ձեերի արդյունաբերական նշանակությունը (վոստրենը, մարգարտաբերներ):

Փորտանիների դաս: Ցամաքային և ջրային խխունջներ. նրանց արտաքին կազմը և կենսակերպը: Խխունջները և կողենջները վորպես գյուղատնտեսության վկասատուներ:

Գլխոտանիների դասը (սեպիա, լոլիգո, ութվոտանի) վորպես փափկամարմինների բարձրակարգ ձեւ. դրանց արտաքին պատկերը, շարժվելու ձեր և կենսակերպը:

Փափկամարմինների նշանակությունը կրի շրջանառության և նստավածքային ապառների գոյացման մեջ: Փափկամարմինների բարձությունը ձեերը, վորպես զեկավար որածոներ յերկը կեղեկի հրն շերտերը վորոշելու համար: Գլխոտանի փափկամարմինների ծաղկած վիճակը յերկը կլանքի սիջին զարագլխում (ամոնիաներ, բելմենիտներ) և դրանց վոչնչացման հավանական պատճառները (վոսկրալոր ձկների յերեան գալը և ծաղկած վիճակը):

Փափկամարմինների ձեերի հետեւողական փոփոխությունները յերկրաբանական զարագլխում:

Փափկամարմինների ջրային թրթուրների և ողակալոր վորդերի ջրային թրթուրների նմանությունը վորպես վկայություն նրանց ընդհանուր ծագման:

Լաբորատոր պարագանք՝ անատամի հերձում:

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (78 ԺԱՄ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (3 ԺԱՄ)

Կրկնություն ու համառոտ տեսություն 6-րդ գասարանում անցած կենդանաբանական նյութի:

ՀՈԴՎԱԾՈՑԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (13 ԺԱՄ)

Գետի խեցետինը վորպես հողվածոտանիների (հատվածուտանիների) տիպարի ներկաւացուցիչ նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված կենսակերպի հետ: Կազմության բարդացումը՝ համեմատած ողակավոր վորդերի հետ: Խիտինային ծածկութը և հողվածավոր վերջավորությունները վորպես հոգվածոտանիների բնորոշ առանձնահատկություն, ուրմնի տարրեր հատվածների—վերջավորությունների ձևափոխությունները՝ կապված դրանց տարրեր ֆունկցիաների հետ:

Հոդվածոտանիների տիպարի բաժանումն առանձին դասերի: Խեցեմորթների (խեցետնակերպերի), դասի ընդհանուր հատկանիշները: Ստորակարգ խեցեմորթներ (գաֆնիաներ, ցիկլոպներ) և դրանց նշանակությունը բնության մեջ և ձկնագույնության մեջ՝ Խեցեմորթների յերկրաբանական հասությունը:

Սարդարգիների դասի և բազմութանիների դասի արտաքին կազմի և կենսակերպի գլխավոր բնորոշ առանձնահատկությունները:

Միջատների դասը: Միջատի արտաքին և ներքին կազմությունը: Բազմացման և զարգացման առանձնահատկությունները՝ լրիդ և թերի կերպարանափոխվող միջատներ: Միջատների գըլխավոր կարգերը և դրանց համառոտ բնութագույն ըստ իրենց թերի կազմության, բերանի կազմության և կերպարանափոխման յեղանակի:

Միջատների ձևերի բազմաքանակությունը և կյանքի պայմաններին դրանց հարմարանքների բազմազանությունը: Պաշտպանողական հարմարանքներ՝ պաշտպանողական գունագործում և պաշտպանողական նմանություն: Նախազգուշացնող գունագործում, միսիլրիա: Այս հարմարանքների հարաբերական նշանակությունը և դրանց մեջ «կաչխորոշ նպատակահարմարության» բացահայտությունը:

Այսպես կոչված «հասարակական» միջատներ. մեղու, նրա կենսաբանական առանձնահատկությունները և ողտագործումը մարդու կողմից: Մեղվի ընտանիքի ծագման հարցը (մենակացմեղուներ, իշամեղուներ):

Միջատների նշանակությունը բնության կյանքում և մարդու տնտեսության մեջ: Միջատները և ծաղիկները: Գյուղատեղանության վասատու միջատներ: Հիվանդություններ տարածող միջատներ: Միջատների քանակության տատանումներն առաջացնող բնակուն պայմանները (վնասատուների մասսայարարա-

հայտնվելը և դրան հետեւ անհայտացումը և այլն): Մի քանի պարագիտ միջատների գործունեյության ոգտակարությունը մարդու համար (հեծյալների, տախին-ճանճի): Վնասատու միջատների դեմ պայքարելու կենսաբանական հիմունքները:

Հոդվածոտանիների կապը ողակավոր վորդերի հետ: Միջատների թրթուրների գորգանման կազմությունը վորպես ապացույց, վոր նրանք ծագել են ողակավոր վորդերից հին բազմութանիների միջոցով:

Լար որատուր պարագունքներ. գետի խեցգետնի կամ մի խոչոր միջատի արտաքինի դիտումը և հերձումը:

ՓՇԱՄՈՐԹԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (3 ԺԱՄ)

Ծովասողը վորպես փշամորթերի տիպարի ներկայացուցիչ: Նրա արտաքին տեսքը, կենսակերպը: Զրատար սիստեմը վորպես փշամորթիների բնուրոշ առանձնահատկություն: Հասկացողություն փշամորթերի տիպարը կազմող դասերի մասին (ծովասողեր, ծովողնիներ, ծովաշուշաններ): Փշամորթների զարգացումը յերկողմայակիա ունեցող թրթուրներից: Փշամորթների հնագույն ձևերը (ծովախնձորներ, ծովաշուշաններ) և դրանց ճառագայթաձև սիմետրիա ունեցող թրթուրներից: Փշամորթների հնագույն ձևերը (ծովախնձորներ, ծովաշուշաններ): Հասկացող կապված հատկանիշը:

ԼԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԱՐ (6 ԺԱՄ)

Վողնաշարավորների նախնական բնութագիրը, վորպես մի խմբակի, վոր միավորում և լարավոր (խորդավոր) կենդանիների մեծագույն մասը:

Վոսկրավոր ձուկը վորպես ջրային ստորակարգ վողնաշարավորների ներկայացուցիչ: Նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված նրա ջրային կենսակերպի հետ: Ներքին կմախքը (վողնաշարը, գանգը), վորպես վողնաշարավորների բնուրոշ առանձնահատկություն: Ձկան զարգացումը:

Կրծիկավոր ձկներ (թառափազիներ, շնաձկներ) և դրանց կմախքի առանձնահատկությունները: Խորդան կամ մեջքի լարը վորպես ստորակարգ ձկների ներքին կմախքի հիմք: Խորդայի աստիճանական արտամղումը վողերի կողմից բարձրակարգ ձբկների մոտ:

Եղտարածուկը վորպես ձկների հին նախահարերին մոսիկ աւագանությունը և տարբերությունը վողնաշարավորի և նշանակածի:

բաձկան «անվողնաշալ վողնաշարավոր»-ի միջև Անցյալներում կինդանական աշխարհը բաժանում է յին վողնաշարավորների և անվողնաշարավորների: Այդպիսի բաժանման անընդատարար լինելը ժամանակակից գիտության տվյալների տեսակետից և լարավորների տիպարը սահմանելուց հետո:

Լարավորների (խորդավորների) տիպարի ընդհանուր բնութագիրը. 1) լարի առկայությունը, 2) մեջքի նյարդային խողովակը, 3) խափկային ճեղքերի առկայությունը: Լարավորների բաժանումը գանգազուրկների և վողնաշարավորների յենթատիպարների:

Վորդերի և նշանարածկան սաղմային ձեռքի (յերկշերտ սաղմեր) նմանությունը վորպես ապացույց գրանց ընդհանուր ծագման, Լարավորների և փշամորթների հին նախահայրերի մոտիկ նմանությունը:

ԶԿՆԵՐԻ ԴԱՍ (8 ԺԱՄ)

ԶԿՆԵՐԻ դասի ընդհանուր բնութագիրը և նրա բաժանումը կարգերի. ճեղքախոփկավորներ և թառափաղգիններ, այդ կարգերի հարաբերական հնությունը և նրանց ներկայիս տարածումը, Վոսկրավոր ձեռքերը վորպես ավելի նոր տպույն խումբ, վորն իր ծաղկման և հասել յերկրի կյանքի արդի գարագրջանում:

ԶԿՆԵՐԻ բազմացումը: Ածած ձերբի և սերնդի պաշտպանության բնագդի մեջ յեղած կապը: Զկնորսությունը և զրա կապը ձեկան կյանքի սեղոնային յերկույթների հետ:

Ծովային ձենորսություն և նրա գարգացումը ԽՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսության պայմաններում: Զկնարուծություն և լճային տնտեսություն:

Հարուրատոր պարապմունքներ՝ ձկան արտաքինի զննումը և հերձումը:

ՅԵՐԿԵՆՑԱՂՆԵՐԻ ԴԱՍ (7 ԺԱՄ)

Գորաը վորպես յերկենցաղների դասի ներկայացուցիչ. նրա արտաքին և ներքին կազմությունը: Գորտի համեմատությունը ձկան հետ և նրա առանձնահատկությունները – կապած նրա՝ ջրեց ցամաք դուրս գալու հետ: Ջրի առկայությունը վորպես գորտի դորության պայման – գորտի բազմացումը և ջերեփուկի ցաղացումը: Երեփուկի ձկնակերպ ստաղիան վորպես յերկենցաղների պատմական գարգացման արտահայտություն:

Յերկենցաղների բաժանումը պոչավորների և անպոչների կարգերի և զրանց բնութագրումն առանձին ներկայացուցիչների որինակի վրա:

Հնագույն յերկենցաղներ՝ ստեղոցեֆալներ – և զրանց կապը հին, վրձնալողակ ձկների հետ: Դրանց յերեան գալու պայմանները: Յերկենցաղների ծաղկած վիճակը քարածխային դաբարաջանության միաժամանակ զարգացումը:

Յերկենցաղների անկատար հարմարվածությունը ցամաքային կենսակերպին:

Լարուրատոր պարապմունքներ՝ գորտի արտաքին զննումը և հերձումը:

ՍՈՂՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (7 ԺԱՄ)

Մողեսը վորպես ներկայացուցիչ սողունների դասի, նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված նրա կենսակերպի հետ: Սողունների տարրերությունը յերկենցաղներից և զրանց ավելի բարձր զարգացման նշանները: Սողունների բազմացման նշանները: Սողունների բազմացման առանձնահատկությունները, վորոնք պայմանավորել են նրա լրիվ ցամաքային կյանքի անցնելու հսկաբարությունը:

Սողունների բաժանումը կարգերի և զրանց համառոտ բնութագիրն առանձին ներկայացուցիչների որինակի վրա (մողեսներ, ոձեր, կողորդիլուսներ, կրիաներ): Անու ձեռքի (գեղնափորիկի) սողուններար փերջավորությունները, զորոնք ցույց են տալիս այդ կենդանիների ծաղումը քառորդ սողուններից:

Սողունների ծաղումը ստեղոցեֆալներից: Ժամանակակից մողեսների գոտաթային աչքը, վորպես նախկին ստեղոցեֆալներից և վրձնալողակ ձկներից ժառանգած առանձնահատկություն: Սողունների բազմազանությունը և ծաղկած վիճակը մեղողյան գարագլում (գինողավորներ, ձկնամողեսներ, թուզող մողեսներ և հետագայում: Նրանց վոչնչացումը (անհետացումը):

Սողունները Յերկենցաղները և ձկները վորպես մարմնի կայուն ջերմություն չունեցող կենդանիներ: Զմեռացին քնի և անարիողի յերեսությունները վորպես կյանքի պայմանների հարմաքանք՝ առաջացած պատմական գարգացման հետևանքով:

Թոչունների արտաքին և ներքին կաղմության առանձնահատկությունները՝ կապված նրանց կենսակերպի հետ (կոնկրետ որինակով): Արտաքին նկարագիրը (փետրավորումը, կտուցը, վոտները, պարանոցի ձկունությունը, յերբ իրանը համարյա լրիվ կերպով անշարժ ե): Ներքին գործարանները, թոչունների կմախչի առանձնահատկությունները: Առջևի վերջավորությունների մասնագիտացումը և դրանց աշխատանքը թափաքի ժամանակ: Թոչունների և սողունների կաղմության ընդհանուր գծերը:

Չու, նրա կաղմությունը: Սադմի զարդացումը ձվից: Խոր կային ճեղքերի սուղիմենտները վորպես վկայություն, վոր ցամաքային վողնաշարավորները ծագել են հին ջրային ձերից, թոչունի և սողունների միջև յեղած նմանությունը ցույց է տալիս նրանց մոտիկ աղքակցությունը:

Մնջողոյան նախաթոչունները վորպես կապող ողակ թըռչունների և սողունների միջև իսկական թաշունների ծաղկումը յերկրագնդի նոր (կայնազոյան) դարագլխում:

Ժամանակակից թոչունների կարգաբանությունը, չարթկըքավոր և վողնուցակրծքավոր թոչունների յենթադասները, վողնուցակուրծք թոչունների բազմազանությունը, վորն առաջացել ե պատմական զարգացման ընթացքում՝ կապված միջավայրի տարբեր սպայմանների և կերակուր հայթայթելու տարբեր ձերին հարմարվելու հետ: Հասկացողություն վողնուցակրծքավորների զլխավոր կարգերի մասին (սագանմաններ, գիշատիչներ, հավագիններ, բազգիններ, ճնճղազգիններ),

Թոչունների բազմացումը: Զվերի գունավորման և ձվի կենսարանական նշանակությունը: Թոչուններ, վորոնց ձագերը ձվից դուրս գալուն պես ընդունակ են շարժվելու և ինքնուրուցն կերպով ապրելու, և թոչուններ, վորոնց ձագերը լինում են անպաշտպան և ինսամքի կարուտ: Կիուի ձագերի պարագիտությունը: Թոչունների չուն, դրա կենսաբանական նշանակությունը և ծագումը:

Բնաւանի հավի, բագի և սագի ծագումը: Հավագինների և սագանմանների տնտեսական ոգտագործման կենսաբանական հիմունքները: Բնաւանի հավերի տոհմերի բազմազանությունը՝ վորպես հետևանք փոփոխականության և արհեստական ընտրության: Պլանային տոհմեր: Արհեստական ինկուբացիա և դրա նշանակությունը ԽՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսության մեջ:

Լաբորատոր պարագմունք՝ թոչունի (աղամի, ագամի, հավ) արտաքինի զննումը և հերձումը:

Կաթնասունների առանձնահատկությունները՝ համեմատած վողնաշարավորների մյուս դասերի հետ (կոնկրետ որինակով)՝ արտաքին և ներքին կաղմությունը, բազմացումը և զարգացումը մասնագիտացումը կաթնասունների պատմական զարգացման հետեւնքով զարգացած բազմացման ձերը՝ կապված կենսակերպի և կյանքի միջավայրի հետ:

Միանցաքանինների կամ ձվածինների յենթադասը (բազակըտուց, յեխիդնա) վորպես կաթնասուններին և սողուններին միացնող խմբակ: Հասպույն կաթնասունների յերեան գալլը միշն կենդանական (մեղողյան) դարագլխի սկզբին և նրանց համական ծագումը հին դապանամողեսներից:

Պարկավորների յենթադասը վորպես կաթնասունների զարգացման ավելի բարձր աստիճան (համեմատած միանցքանինների հետ): Պարկավորների արդի տարածումը և նրանց բազմազան ձերն Ալստրիալիայում այդ մայրացամաքի մյուսներից վաղուց բաժանվելու առնչությամբ:

Բարձրակարգ կաթնասունների յենթադասը: Բարձրակարգ կաթնասունների արագ ծաղկումը և մասնագիտացումը յերլորդական դարաշրջանում: Միջատակերների կարգը վորպես միխմբակ, վոր պահպանել ե իր մոտիկությունը հին բարձրակարգ կաթնասունների հետ (ատամների թույլ գիֆերենցումը, փոքր չափերը, հնգամատությունը և թաթագնացությունը):

Զեռքաթաթայինների կարգը վորպես մասնագիտացած, միջատակերներին մուտիկ խմբակ:

Կրծողների կարգը վորպես բացառապես բուսական կերակըրով անվիրան հարմարված խմբակ: Կրծողների կենսաբանական առանձնահատկությունները, վորոնց շնորհիվ նրանք արդի դարաշրջանում հասել են ծագված վիճակի:

Գյուղատնտեսության վկասատու կրծողներ: Ամբակավորների ծաղկած վիճակը՝ կապված բաց տափաստաններ առաջանալու հետ: Անհետացած նախամբակավորներ (փենակողում) և ներկայիս միասումբակների և յերկսմբակների կարգերի զարգացումը: Կնճթափորների կարգի առանձնահատկությունները և նրանց ծագումն ավելի մանր և ավելի քիչ մասնագիտացած ձերից:

Գիշատիչների կարգը և դրա մեջ մտնող գլխավոր ընտա-

Նիքները, թիավոտանիների և կետանմանների կարգը, վորպես
հնագույն կաթնասունների խիստ փոփոխված և մասնակիտացած
ժառանգների կարգ:

Պրիմատների կարգը և նրանց առանձնահատկությունները:
Կապիկները վորպես մազլցող կենդանիների, Մարդը վորպես պրի-
մատների կարգի անդամ. մարդու կառուցվածքի այն գծերը, վո-
րով նա տարբերվում և կենդանիներից:

Ընտանի կաթնասունները, Գլխավոր ընտանի կաթնասուն-
ների ծագումը (շան, կովի, վոչխարի, խոզի, ձիու, ճաղարի),
Ընտանի կենդանիների բազմազնությունն և արհեստական ընտ-
րության նշանակությունը:

Վորսի գաղաններ—գաղանաբուծությունը վորպես սոցիա-
լիստական կենդանաբուծության մի նոր ճյուղ, Բնության պաշտ-
պանությունը, ԽՍՀՄ-ի կենդանական աշխարհի վերակառուցումը:
Լաբորատոր պարապմունք. — Փոքր կաթնասունի
(կրծողի, կատվի) հերձում:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (2 ԺԱՄ)

Կրկնովություն, ամփոփում և յեզրակացություններ կեն-
դանաբանության և մասամբ բուսաբանության դասընթացի
նյութի հիման վրա¹⁾:

Կենդանական աշխարհի զարգացման և տօհմական ծառի
նկարի ընդհանուր տեսությունը: Հասկացողություն փոփոխակա-
նության և ժառանգականության մասին: Փոփոխակները վորպես
ապագայի նոր տեսակ:

Արհեստական ընտրության եյությունը, վորը գործադրում
և մարդը, և բնական ընտրությունը բնության մեջ, վորպես
անթիվ սերունդների ընթացքում գոյության կովի մեջ որդա-
նիկմի համար ոգտակար ժառանգական փոփոխությունների ընտ-
րություն:

1) Այս բաժնի համապատասխան նյութն այն դպրոցում և միայն քըն-
աբրկում, վորի աշակերտները չեն անցնում մէջնակարգ դպրոցի հաջորդ դա-
ստրանները:

ՈՒԹԵՐՊՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱՆ ՅԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՆ

(78 ԺԱՄ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան և դրանց խնդիրները-
մարդու և կենդանիների նմանություններն ու տարբերություն-
ները: Գործիքների գործածությունը և արտադրությունը վորպես
մարդու հատկանշական գծեր. աշխատանքը մարդկային կյանքի
հիմքն եւ:

ԲԶԻՉ ՅԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՎԱԾՔՆԵՐ (7 ԺԱՄ)

Բուսական ու կենդանական բջիջների կազմության նմա-
նությունն ու տարբերությունը, Կորիզի, պրոտոպլազմի և թա-
ղանթի գերը կենդանական բջիջում:

Բջիջների կիսումը՝ ուղղակի և անուղղակի: Կենդանական
հյուսվածքի կազմությունը՝ եպիթելիալին, կրծկային, շարակցա-
կան և մկանային հյուսվածքների որինակների վրա (բջիջներ,
միջրջիջային նյութ, սինցիտիում):

Համաստո տվյալներ որգանիզմների բջջային կազմության
ուսմունքի պատմությունից:

Լաբորատոր պարապմունք և ցուցագրում. ման-
ըագիտակային պարապմունքներ՝ բջիջն և հյուսվածքներին ծա-
ռոթանալու համար:

ՎՈՍԿՐԵՄԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (8 ԺԱՄ)

Վոսկրեմկանային համակարգի նշանակությունը որգա-
նիզմի համար:

Մարդու և վողնաշարավոր կենդանիների կմախքի նմանու-
թյունը: Մարդու կմախքի առանձնահատկությունները, նրա
մարմնի ուղղաձիգ դիրքի կապակցությամբ (գանգը, վողնաշարը,
կոնքը, թաթը, ձեռքի թաթը):

Վոսկրեմների միացումը: Հոդերի կազմությունը: Վոսկրեմների
բաղադրությունը և կազմությունը: Վոսկրամաշկի դերը: Վոսկը-
ների միացումը կոտրվելուց հետո: Կմախքի առձևացումը (զե-
ֆորմացիան) աշխատանքի ժամանակ անկանոն դրության ազ-
գեցության տակ: Մկանների միացումը վոսկրեմներին: Կմախքի
մկաններ և ներքին գործարանների մկաններ: Կծկվելը վորպես

Ականների հիմնական հատկությունն է չասկացողությունն մկանների հոգնածության մասին: Որիթմի և բեռնվածության նշանակությունը մկանների աշխատանքի ժամանակ: Մկանի աշխատանքի մեքենայի աշխատանքի համեմատությունը: Մկանների նորմատ գործունեյության պայմանները (թթվածնի, սննդանյութերի մատակարարում, քայլքայման արդյունքների արտաթորում): Մկանային աշխատանքի գործունեյության ուղղեցությունը մկանային համակարգության և ամբողջ որդանիզմի վրա:

Լաբորատոր պարագմունք և ցուցադրում:— Կաթնասուն կենդանու արմունկի կամ ծնկան հողի անդամահատումը: 2) վոսկը որդանական կամ հանքային նյութերից զըրկելը: 3) գորտի վոտքի բաց արած մկանի կծկունությունը դիտել:

ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՊՈՒԽԹՅՈՒՆ (8 ԺԱՄ)

Արյան շրջանառության նշանակությունը որդանիզմի համար: Արյան բաղադրությունը: Պաղպակ ձեւական մարմնիներ: Ածխաթթու գաղիկ թթվածնի փոխաղբությունն որդանիզմի մեջ: Կարմիր և սպիտակ մարմնիներ և նրանց նշանակությունը: Արյան մակարդան նշանակությունը: Հասկացողություն խմունիտեաի մասին:

Սրտի կազմությունը: Զարկերակներ: Յերակներ: Մաղանոթներ, դրանց նշանակությունը: Արյան և ավիշի շրջանառության ընդհանուր սիսեման: Ավիշի առաջացումը:

Նյութերի փոխանակությունը արյան և ավիշի միջև: Արյունն ու ավիշը վորպես միջավայր ըջիչների և հյուսվածքների համար: Սրտի աշխատանքը, գործարաններն արյունով լցվելը որդանիզմի հանդիսա վիճակում և զանազան գործունեյության ժամանակ:

Սիրտը վարժեցնելու (Երևան) նշանակությունը: Սրտի գերհոգնածությունը և զգուշական միջոցները:

Լաբորատոր պարագմունքներ և ցուցադրում: 1) Արյան պրեպարատ պատրաստել և դիտել մանրադիտակով: 2) Մանրադիտակով նայել գորտի թաթի թաղանթի մեջ արյան շարժումը: 3) Ստանալ դեֆիբրինացրած արյուն: 4) Արյան գուղքուրման փոփոխությունը թթվածնի և ածխաթթու գաղի առաջացության տակ:

ԾՆՉԱՌՈՒԽԹՅՈՒՆ (5 ԺԱՄ)

Ծնչառության նշանակությունն որդանիզմի համար: Ծնչառական գործարանների կազմությունը: Ծնչառական

շարժություններից մեխանիզմը և կարգավորումը (ոեզուլացիա): Չայնական ապարատի կազմությունը և բաժանահնչուն խոսակցության հարմարանքը: Արհեստական ջնշառություն: Գազափոխանակությունը թոքերի և հյուսվածքների մեջ: Թոքային ողափոխությունն ու գազափոխանակությունը որգանիզմի տարբեր գործունեյության ժամանակ:

Մաքուր ողը վորպես արդյունավետ արտադրական աշխատանքի պայմաններից մայմաններից մեկը: Ծնչառական գործարանների կազմության առանձնահատկություններ, վորոնք որդանիզմը պաշտպանելու նշանակությունը ունեն՝ թոքերի մեջ ցուրտ ող, փոշի և մանրեներ անցնելիս:

Թունավորվելը ջնշառական գործարանների միջոցով: Մարտական թունավոր նյութեր:

Լաբորատոր պարագմունեներ ու ցուցադրումներ.

1) Զննել կաթնասուն կենդանու ջնշառական գործարանները և հերձել թոքերը:

2) Հայտնաբերել ածխաթթու գաղն արտաջնչած ողի մեջ:

ՍՆՆԴԱՌՈՒԽԹՅՈՒՆ (10 ԺԱՄ)

Սննդառության նշանակությունը որդանիզմի համար: Մարդու և կաթնասուն կենդանիների մարսողական գործարանների կազմության նմանությունն ու տարբերությունները:

Սննդանյութերի հիմնական խմբերը մարսողական (սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր): Զուր, աղեր:

Մարսողական գեղձեր: Մարսողական գործարանների ֆերմենտները: Կերակրի շարժումը մարսողական խողովակների միջով: Կերակրի փոփոխումներ մարսողական գործարանների զանազան մասերում: Հասկացողություն կենդանիների և մարդու մարսողական գեղձերի աշխատանքն ուսումնաբիրելու մեթոդների մասին: Որգանիզմի մեջ անցնող նյութերի (սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի) ներծծումը: Ներծծված նյութերի յուրացումը: Հասկացողություն սննդի սորմաների մասին: Որվա (24 ժ.) ընթացքում մարդու որդանիզմի ծախսած եներգիան հանգիստ վիճակում: Բանվորական հավելում: Եներգիայի ծախսումը մտավոր և Փիզիկական աշխատանքի ժամանակ: Աշխատանքային գործունեյությունը միայն ըստ ծախսած եներգիայի գնահատելու սխալ լինելու: Սննդառության հիգիենայի բնախոսական հիմունքները: Հա-

սարակական սնունդը սննդառության առողջացման և ռացիոնալացման ուղին եւ:

Հաբորատոր պարապմունքներ և ցուցադրումներ. — 1) Կաթնասուն կենդանու կամ գործի հերձում և մարսողական համակարգության դիտում. 2) սպիտակուցների, ճարպերի, և ածխաջրերի հայտնաբերումը սննդամթերքների մեջ. 3) թուքի, ստամոքսահութի և ինթաստամոքսային գեղձի հյութի մարսողական ազդեցությունը.

ԱՐՏԱԹՈՐՈՒԹՅՈՒՆ (5 ԺԱՄ)

Արտաթորության նշանակությունն . որգանիզմի համար հյութափոխանակման վերջնական արտադրանքները և զրանց արտաթորումը: Ցերիկամների կաղմությունը և միզագոյցման պրոցեսը: Միզարտաթորման գործարանները: Մաշկի կաղմությունը: Մաշկը վորպես արտաթորության և զերմակարգավորման գործարան, Զերմության արձակումը մաշկի կողմից բարեխառնության ու խոնավության տարբեր պայմաններում: Մաշկի միշտով ներս մտնող թույները: Մարտական թունավոր նյութեր:

Հաբորատոր պարապմունքներ և ցուցադրումներ. — 1) Կաթնասուն կենդանու յերիկամի հերձումը: 2) Մանրագիտակող դիտել մաշկի լայնական հատածը:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ (13 ԺԱՄ)

Նյարդային համակարգության նշանակությունն որգանիզմի համար:

Նյարդային համակարգության կաղմությունը՝ կենտրոնական, պերիֆերիկ և վեգետատիվ նյարդային համակարգ: Մարդու և վոլնաշարավոր կենդանիների նյարդային համակարգության կաղմության նմանությունն ու տարբերությունը: Հասուկացողությունն նեյրոնի մասին: Նյարդային հյուսվածքի հատկությունները՝ (գրգռականություն և հազորդականություն):

Հասկացողություն վեգետատիվ նյարդային համակարգի մասին: Ներքին գործարանների իներիցիան: Վողնուղեղի կաղմությունը: Ռեֆլեքսային ուղեղ: Վողնուղեղային ուղեղները: Աւղեղի բունը: Ցերկայնաձիգ ուղեղ: Միջին ուղեղ: Փոքր ուղեղ: Մեծ կիսազնդեր:

Հասկացողություն բարդ ուղեղների մասին: Քայլվածքը

վորպես բարդ ուղեղսային գործունելյության որինակ: Հասկացողություն ոնազդների մասին՝ վորպես բարդ ուղեղների: Ուղղի մեծ կիսադնդերը վորպես բարձր նյարդային գործունելյության գործարանները: Պայմանական ուղեղների մասին կանոնակիր նշանակությունը կենդանու կյանքում: Մարդու պայմանական ուղեղները: Մարդու բարձր նյարդային գործունեյութան յուրահատկությունը: Մարդու գիտակցության սոցիալական պայմանական ուղեղներն առաջանալու միջնով բացատրելու գործերի ուսակցիոն եյությունը:

«Հոգու» գոյության ուսմունքի դասակարգային եյությունը: Զգայարաններ և նրանց նշանակությունն որգանիզմի մեջ: Տեսողության գործարան: Ցանցաթաղանթը վորպես ընդունող նյարդային ապարատ: Լուսության գործարան: Կորայան գործարանի գերը: Հոտառության: ճաշակելիքի և շոշափելիքի գործարաններ: Մկանային զգայություն:

Հաբորատոր պարապմունքներ և ցուցադրումներ. — 1) Նյարդային հյուսվածքի հատկությունների ցուցադրում գործի բացած նյարդի վրա. 2) Վողնուղեղային ուղեղների ցուցադրումը գլխատած գործի վրա. 3) Կաթնասուն կենդանու աչքի հերձում:

ՆԵՐԲԻՆ ՍԵԿՐԵՑԻՆ (5 ԺԱՄ)

Հասկացողություն ներքին սեկրեցիայի (ներզատ) պեղձերի մասին: Վահանաձե, ուռուցքային գեղձեր, ուղեղային հավելված, սեռական գեղձեր, մակարիկամային գեղձեր: Դրանց նշանակությունն որգանիզմի մեջ: Կենդանիների ներզատ գեղձերի հեռացման գործերը: Առանձին ներզատ գեղձերի նորմալ գործունեյության խանգարման հետևանքը: Ներզատ գեղձերի կապը միմյանց հետ: Ներքին սեկրեցիաների բնագավառում ձեռք բերած նվազնությունները և դրանց գործնական նշանակությունը կենդանաբուծության ու բժշկության մեջ:

Ցուցադրել վահանաձե ու սեռական գեղձերը հերձած կաթնասունի վրա:

ՆԵՐԻԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ՄԱՐԴՈՒ ՈՐԳԱՆԻԳՄՈՒՄ (4 ԺԱՄ)

Նյութերի փոխանակության ընդհանուր պատկերն որգա-

Նիզմում: Ասախմիլիացիան ու դիսումիլիացիան վրապես որդա-
նիզմում նյութերի և եներգիայի փոխանակման միևնույն արտա-
ցեսի յերկու հակաղիք կողմերը: Ֆերմենտների դերը նյութերի փոխանակության մեջ: Հյուսվածքային չնշառություն: Որդա-
նիզմում նյութերի փոխանակումը վրոշելու հիմնական յեղա-
նակները: Նյութերի փոխանակության հետ կապված խանգա-
րություն որդանիզմում (հիպերտրոֆիա, ձարպակալում, նիհա-
քում): Նյարդային և հումորալ ներգործումը նյութերի փոխա-
նակության վրա:

ԱՃՈՂ. ՈՐԳԱՆԻՉՄԻ ԲՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ (4 ԺԱՄ)

ԶԼԱԲՑԻԾ. Սպերմատոզիդ։ Բնեղմնավորում։ Ներարկանգալին կյանք։ Մարդու և կենդանիների սաղմերի նմանությունը զարգացման առաջին շրջանում։ Կոռզ որդանիվմում առաջացող փոփոխությունները հղութեան առնչությամբ։

Զորգացման առանձնահատկությունները, պատահնելիական և մանկական հասակում: Կմախքի հասակային առանձնահատկությունները: Մանուկների և պատանիների սրտա - անօթային համակարգի առանձնահատկությունները:

Մննդառությունը մանկական և պատանեկական հասակութեա
Սեռական հասունության զրջանը և նրա առանձնատկու-
թյունները, Որդանիզմի ներքին սեկրետար գործունեցությունը
մանկական և սեռական հասունացման շրջանում: Երսկուրսիա-
դեպի առողջապահութան, մայրության և մանկության թան-
գարան՝ մալգրու սաղմային գարգացման հետ ծանոթանալու հա-
մար:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (4 ԺԱՄ)

Մարդու որդանիզմում տեղի ունեցող պրոցեսների իմացության նշանակությունը՝ աշխատանքը և կենցաղը կազմակերպելու գործում:

Զանազան գործարանների և համակարգությունների մաս-
նակցությունն աչխատանքի պրոցեսում։ Մարդու բարձր նյար-
դային գործունեցության նշանակությունն աշխատանքի պրոցե-
սում և աշխատանքի ռւսակություններ մշակելու գործում։ Գի-
տակցության դերը մարդու աշխատանքային գործունեյության
մեջ։ Դեպի աշխատանքը գիտակցական դերաբերմունքի նշանա-
կությունը սոցիալիստական կարգերի պայմաններում։

Հասկացողություն հոգնածության մասին։ Ինչու մարդուն չի կարելի դիտել վորպես մեքենա։ Հոգնածության բացատրության մեջ թույլ տրվող սիմալները։ Հոգնածության դիմ պայքարելու նշանակությունը՝ աշխատանքի մեջ խնայողություն ձեռք բերելու տեսակիտից։ Խնայողական աշխատանքի պայմանները՝ հետաքրքրություն գեպի աշխատանքը, աշխատանքի կանոնավոր սիթմը, ավելորդ շարժումների վերացումը, աշխատանքի ճիշտ ձևերի յուրացումը, աշխատանքի և հանգստի կանոնավոր հաջորդումը, շրջապատող պարագաների սանիտարա—հիգիենիկ պայքանները։

Կենցաղի ճիշտ կազմակերպման նշանակությունն աշխատավորների առողջության և աշխատունակության բարձրացման համար:

Եքսկուրսիա դեպի արտադրություն, աշխատանքի ռացիոնալացման և պաշտպանության միջոցառումներին ծանոթանալու համար:

ԿՐԿՆՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ (« ՃԱՄ »)

ԻՆՍԵՐՈՒԴԻ ԴԱՍԱՐԱՆ

ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՈՒՍՏՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (78 ԺԱՄ)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Զարդ զասարանի դասընթացը՝ «Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները» կառուցվում և աջակերտների կողմից, վոչ լրիվ միջնակարգ դպրոցում անցած բուսաբանության և կենդանաբանության դասընթացի բազայի վրա:

Այդ դասընթացների ուսումնասիրությունն աշակերտներին պետք ե կոնկրետ գիտելիքները բավարար պաշար տա եվոլուցիոն ուսմունքի զարգացման համար:

Զ-րդ դասարանի աշակերտների հասակը միանդամայն առահովում և հետաքրքրությունը դեպի այս դասընթացի հիմնական հարցերը և լիակատար հնարավորությունն եւ տալիս անցնել այն բաժականնին խորապես կեռապէ:

Տրվող գիտելիքները պետք ե որգանափես կապել սոցիալիստական շինարարության գործնականի հետ։ Ուսման նյութին պետք ե տալ վորոշ քաղաքական ուղղություն, աշակերտներին հասկանալի, կոնկրետ որինակներով քննադատություն բաց անել որգանական աշխարհի զարգացման մասին ժամանակակից բուրժուական տեսությունների իդեալիստական և մեխանիստական

խեղաթյուրումների դեմ, բանալով գրանց դստակարդային եյությունը:

Անհրաժեշտ ե աշխատանքն այնպես կազմակերպել, զոր ծրագրի կոնկրետ նյութն անցնելու ժամանակ աշակերտներն իրենք ուսուցման աշխատանքի ընթացքով մոտենան բնության դիալեկտիկ զարգացման որենքների հայտնագործման և գիտության դասակարգայնության ըմբռնման:

Մրագրային նյութի յուրացման համար անհրաժեշտ ե ամեն կերպ աշխատանքի մեջ ոդտագործել լավ, ընտրովի ուսումնառության վերաբերյալ (պրեարատներ, հավաքածուներ, նկարներ, դիալեկտիկ վիճակ, կինո, կենդան նյութ). Անհրաժեշտ ե ծրագրի մեջ նշված յուրաքանչյուր թեմայի համար եքսկուրսիաների, լրաբառատոր պարագմունքների և ցուցադրումների մինիմումի կատարումը: Ամառային սեղոնի ընթացքում, ուսումնական տարվա սկզբին անհրաժեշտ ե պատրաստել կենդան և աշակերտներին դասերի ժամանակ բաժանելիք նյութեր:

Ծ Ր Ա Գ Ի Ռ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (4 ԺԱՄ)

Մինչդադար գարվինյան վրշանի կենսաբանության ընդհանուր բնութագիրը: Կրոնա—դոգմատիկ հասկացողությունները ևստեղծագործության խելացի պլանի և կենդան բնության անփոփախականության մասին: Եվլուցիոն հայացքների սաղմերը հինգարերի և միջնորդայրյան փիլիսոփաների մոտ. (ամենահամառութեղեններ): Լինսեյ և Նրա ուսմունքը՝ «տեսակի» մտածին: Լինսեյան կարգաբանության սկզբունքները և հիմունքները: Տեսակների անփոփախականության մասին լինսեյի հայացքների փոփոխությունը, նրա գիտական գործունեյության վերջում: Դրա պատճառները: Կենսաբանությունը՝ 19-րդ դարում՝ 19-րդ դարի եվլուցիոն գաղափարները՝ մինչ Դարվին: Լամարկի և Փ. Սենթերի ուսմունքի հիմունքները: Կյուվելի կատաստրօֆների տեսության համառությունները, վորը հավանավորում երացնարենի ստեղծագործության կրոնական ուսմունքը:

Դարվինիզմի ծագման հաստիակական — պատճառական և սաղմանական նախադրյալները (կապիտալիզմի մուտքը դյուզատնաբռության մեջ և ագրարային հարաբերությունների փոփոխություններն Անգլիայում 19-րդ դարի կեսերին, առետրի, ճանապարհորդությունների, լեռնային գործի և յերկրաբանության զարգացումը և բնագիտության դրությունը 19-րդ դարում):

2. ԴԱՐՎԻՆԻՑՄ (30 ԺԱՄ)

Ա. Զ. Դարվինի տեսության հիմնական որենքները (13 ժամ): Մշակովի բույսերի և ընտանի կենդանիների փոփոխականությունը: Տնտեսագետ արքեքավոր ժառանգական փոփոխությունների արհեստական ընտրության եյությունը մի շարք սերունդների ընթացքում: Նոր ձեւերի առաջացումը բնության մեջ, բընական պայմաններում:

Որգանիզմների բազմացման ինտենսիվությունը և ապրող հասունացած անհատների չնիւն քանակությունը: Գոյության կույզ, գոյության կույզի տարրեր ձեւերը.

ա. տեսակի ներսում, բ. տեսակների միջև և գ. կույզ առարգամ բնության ուժերի դեմ: Տեսակի ներսում կատարվող կույզի ամենախնտենսիվ լինելը:

Բնական ընտրությունն ամենահարմարվածի ապրումն ե գոյության կույզի հետևանքով: Բնական ընտրության ազդեցության մեխանիզմը: Բնական ընտրության փորձնական ուսումնասիրությունը:

Որգանական աշխարհի զարգացման պատճականությունը և ցեղակցությունը՝ համաձայն Դարվինի տեսության: Եվոլյուցիոն և հարմարվածության յերեւյթը բուսական և կենդանական աշխարհներում, գոյության տարրեր պայմաններում: Կենդանիների գունավորման կենսաբանական տիպերը (պաշտպանողական, սպառնացող, զգուշացնող, միմիկրիա), սիմրիոզ, պարագիտիզմ և այլն: Նպատականարմարության յերեւյթների կրոնական մետաֆիզիկի բացատրությունները և դրանց անհեթեթությունը:

Որգանիզմների նպատականարմարությունը՝ վորպես հետեւակներ բնական ընտրության: Այս նպատականարմարության հարաբերական բնույթը: Նպատականարմարության յերեւյթների՝ Դարվինի և Լամարկի բացատրությունների համեմատությունը: Ձևերի անջատումը, միջակա ողակների անհետացումը և նոր տեսակների առաջացումը: Աշխարհագրական և կենսաբանական իրազեցիայի նշանակությունը նոր տեսակներ առաջանալու խթնդրում: Փոփոխակի և տեսակի մեջ ճիշտ տարրերություն գնելու անհնարինությունը: Տեսակի առաջացման Դարվինյան սխեմայի առաջանական մուտքը տարբածումը տաքսոնոմիկ բարձր խմբերի՝ ցեղերի, ընտանիքների և մյուս խմբերի վրա:

Եքսէպուրիաներ և դիտումներ. 1) Եքսէպուրիան չեղի բնաթյուն կամ թանգարան՝ ուսումնասիրելու բուսական

և կենդանական սիստեմատիկ (կարգաբանական) խմբերի բողոքանությունը, կենդանիների և բույսերի հարմարանքները շրջապատող միջավայրին, դիտելու գոյաթյան կովի և բնական ընարության հետևանքները; 2) Դիտումներ և փորձեր ժառանգական և վոչ ժառանգական փոփոխությունները պարզաբանելու համար:

Բ. Որգանական ածխարի զարգացումը հաստատող փասէնը (13 ժամ) Տեսակի մասին ժամանակակից ուսմունքի հիմունքները: Համեմատություն կինների ուսմունքի հետ: Բնական սիստեմը (կարգաբնությունը) վորպես որգանական աշխարհի ելույց այլ արտացոլում:

Տվյալներ համեմատական անատոմիայից: Հասկացողություն հոմոլոգիկ և անոլոգիկ գործարանների մասին: Հոմոլոգիկ գործարանների նշանակությունն որգանիզմների մեջ ազգակցական կապերը հաստատելու համար: Հասկացողություն կոնվերգենցիայի մասին և դրա բացատրությունը Դարվինի տեսությամբ: Ռուղիմենտար գործարանները: Ռուղիմենտար գործարանների առկայության բացատրությունը Դարվինի տեսությամբ:

Անհատական զարգացման (ոնտոգենիայի) ուսումնասիրության նշանակությունն որգանիզմների տեսակային զարգացման (Փիլոգենիա) պրոբլեմին ճիշտ մոտենալու տեսակետից: Վողնաշարավորների սաղմերի համեմատությունը: Մյուլեր — Հեկելի բիոգենետիկ որենքը: Որգանիզմների սաղմերին զարգացումը վորպես որգանական աշխարհի միասնական ծագման ապացույցներից մեկը: Բիոգենետիկ որենքի լուսաբանումը ժամանակակից գիտության կողմից: Բիոգենետիկ որենքի արժեքն իր արդի լուսաբանությամբ՝ ոնտոգենիայի և Փիլոգենիայի փոխադարձ կապն լրացնելու համար:

Հնաբարանության ավյալները: Բրածո մնացորդներ և նըրանց՝ յերկրի կեղերի մեջ պահպանվելու պայմանները: Կյանքի զարգացման ընդհանուր պատկերը եռոյցյան դարագլխից սկսած մինչև ներկա դարաշրջանը: անցողիկ և հավաքական բրածո ձեվեր: Զեերի ներառանական շարքեր (սմբակավորների և կնճիթավորների որինակով): Որգանական աշխարհի տոհմարանական ծառերը:

Կենսաշխարհագրության տվյալները: Ֆլորայի և ֆաունայի ժամանակակից տարածումը վորպես հետևանք յերկրի պատկերի փոփոխման և որգանիզմների եվոլուցիայի: Ավտորակայի և նորգելանդիայի բրածո կաթնասունների պրիմիտիվ ձեվերը: Բնա-

կան իշուլիացիայի նշանակությունն անհետացող ձևերի պահպանման մեջ:

Յեկեղեցականների և ժամանակակից բուրժուազիանների կողմից ստեղծագործության վեցորյակի մասին կրոնական լեզունդը «գիտականորեն» գիտության տվյալներով հիմնավորելու փորձերի դասակարգային եյությունը:

Լաբորատոր պարագմունքներ և ցուցադրումներ:

1) Դպրոցում ունեցած տարբեր դասերի պատկանող կենսանիների ամրողի կմախքները և վերջավորությունների կազմությունը համեմատել միջանց հետ: 2) Ցույց տալ ուղղիմենտներ կենդանիների տարբեր ներկայացուցիչների վրա: Որինակ՝ մատների մնացորդները սմբակավորների վոտների վրա: Խուղիմենտները կատարի մոտ: Մողեսի յերբորդ գագաթնային աշքը և այն, 3) Մանրադիտակով և խոզորացույցով գիտել ձվերը և սաղմերը՝ տրիտոնի, գորտի, միջատի: 4) Հետևել հավի ձագի զարգացմանը ձվի մեջ (հնարավորություն յեղած գեպքում ամեն որ, կամ գոնե յերեք որը մեկ անգամ ձռւ վերցնել թխսի տակից կամ ինկուբատորից՝ հետազոտության համար) և այս նյութերը պահել պարագմունքի համար սպիրտի կամ ֆորմալինի մեջ: 5) Կենսաշխարհագրական տվյալներն ուսումնական տարեկան ժողով տալ քարտեզներ և նկարներ: 6) Հնեաբանական տվյալների ուսումնասիրության համար կատարել եքսկուրսիա զեափի բնական յերկրաբանական բացվածք կամ տեղական թանգարանի համապատասխան բաժին:

Գ. Գաւիվինիզմի նեանակությունը (4 ժամ) Դարվինիզմի գնահատականը մարքսիզմի հիմնադիրների կողմից: Դարվինիզմը վորպես որգանական աշխարհի զարգացումը հիմնականում ձիշտացատրող ուսմունք և կենսաբանությունը գիտական հողի վրա: Պնողը: Մատերիալիստական դիալեկտիկայի տարերացին բնույթը գարվինիզմի մեջ: Դարվինիզմի սխալները և դրանց դասակարգային պայմանավորվածությունը: ա) Դարվինի՝ «բնույթյունը թիշտներ չի գործում» դրույթի հակասությունն որգանական աշխարհի զարգացման վերաբերյալ նրա տեսության հիմնական որենքներին: բ) Գոյության կովի և բնական ընտրության որենքի աարածումը մարդկային հասարակության զարգացման վրա:

Դարվինիզմի նշանակությունը բնույթյան վերաբերմար կրոնաշիքավական հայացքների դիմ պայքարելու դորժում:

Դասակարգային պայքարը զարվինիզմի շուրջը։ Վիզավիստական, հակադարձինիստական չարժման ուժեղացումը կապիտալիստական յերկիրներում — կապիտալիզմի ներկա ճգնաժամի կապակցությամբ։ Հասկացողություն նեռլամարկիզմի և նրա հետադիմական ելության մասին։ Բուրժուական գիտության ձբգտումը՝ դարվինիզմը գործադրել կապիտալիստական հասարակայնության մեջ անհավասարությունն արդարացնելու համար։ «Սոցիալական դարվինիզմի» հետադիմական — դասակարգային բնույթը և գիտական անկարողությունը։

3. ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՑԵԼ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (19 ԺԱՄ)

Գենետիկան վրայես զիտություն փոփոխականության և ժառանգականության մասին։ Գենետիկայի ուսումնասիրության նշանակությունը եվոլյուցիոն ուսմունքի դասընթացում։ Գենետիկայի գործնական նշանակությունը և նրա զարգացման հեռանքարները ԽՍՀՄ — ում։

Հասկացողություն ժառանգական և վոչ ժառանգական փոփոխականության (մուտացիայի և սոդիֆիկցիայի) մասին։

Ժառանգականության նյութական հիմունքները։ Սեռական քջիներ, նրանց կազմությունը և նրանց մեջ տեղի ունեցող պրոցեսները մինչ բեղմնավորում և բեղմնավորումից հետու ծանոթություն քրոմոզոմների, կարիոլինեղի մասին։ Ռեգուլյարուն բաժանման առանձնահատկությունները։ Գեն և հատկանից Գենոտիպ և ֆենոտիպ։ Հատկանիշների ժառանգման որևէնքն ըստ Մենդլի և այդ որենքների բացատրությունը քրոմոզոմային տեսության տեսակետից Մենդելիզմի նշանակությունը։

Նոր տվյալներ Գենետիկայում, վորոնք լրացնում և զարգացնում են մենդելիզմը։ Գեների կցումը։ Սեռի ժառանգումը։ Նորագույն նվաճումներ ժառանգականության ցիտոզիտիայի (բջջաբանության) մեջ։ Մորգան, Մյուլլեր, Գենետիկայի նշանակությունն որգանիզմների եվոլյուցիան հասկանալու համար։ Մուտացիաների և կոմբինացիաների դերը տեսակի առաջացման պրոցեսում։ Եքսպերիմենտալ ներգործությունը մուտացիոն պրոցեսի վրա։

Ժառանգականության ուսմունքի կիրառումը մարդու վերաբերմքը։ Բուրժուական գենետիկայի դասակարգային հետադիմական ելությունը։

Գենետիկայի նշանակությունը սելեկցիայի մեջ։ Սելեկցիայի հիմունքները։ Հասկացողությունը բույսերի սելեկցիոն տեսակ-

ների և կենդանիների սելեկցիոն տոհմերի մասին։ Սելեկցիան աշխատանքը հիմնական մեթոդները՝ ընտրություն, խաչաձևում։ Որինակներ կենդանաբուծության ու բուսաբուծության մեջ սելեկցիայի նվաճումներից։ Սելեկցիան ԽՍՀՄ — ում։

Վհասակար թերթը՝ ըստ զինեական գիտությի և սելեկցիայի տեսական ու գործնական ճյուղերի մեջ։ ա) ժառանգական գործուների անոնաւումը, բ) արտաքին միջավայրի գերի թերագնահատումը ֆենոտիպն արտահայտելու մեջ։

Եքսկուրսիաներ, լաբորատոր պարագամունքներ։ 1) Եքսկուրսիա գեղյի ցեղային անկարան կամ գեղի սելեկցիոն կայան։ 2) Լաբորատոր պարագամունքներ փոփոխականության — ուսումնասիրության վելաբույյալ։ 3) Սշխատանքներ բույսերի և կենդանիների խաչաձևման գերաբերյալ (գրողոֆիլա, ճանձ, շան — բերան (բույս) ճագար, ճավ, մկներ, ակսոլուլ... նայած տեղական պայմաններին)։ 4) Դիտել կարուկինետիկ բաժանումը պատրաստի մանագիտակային պրեպարատի վրա։ 5) Գենետիկական խնդիրների լուծում։

4. ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ (11 ԺԱՄ)

Կրոնա — իդեալիստական և մատերիալիստական հայացքներ, մարդու ծագման վերաբերյալ։ Աստվածաշնչի լեզենդան մարդու ստեղծագործության մասին՝ աստծու ձեռքով, վորպես մարդու ծագման գերբնական բացատրության որինակ։

Գիտական — մատերիալիստական տվյալներ մարդու ծագման վերաբերյալ։ Մարդու տեղը վորպես կենդանատեսակ հոտօն Sapiens կենդանական աշխարհի սիստեմի մեջ։ Ապացույցներ մարդու և կենդանիների ցեղակցության վերաբերյալ։ Համեմատական անատոմիայի տվյալներ։ Խուզիմենտար գործարաններ և առավիզմի յերկույթներ։ Համեմատական բնախոսական տըզյալներ։ Սաղմաբանական տվյալներ։ Մարդուն մտու ցեղակից կենդանիները։ Մարդու և մարդանման կապիկների նմանությունը և վորակական տարբերությունները։

Մարդու եվոլյուցիայի որենքների հարցի սխալ լուծումը դարվինիզմի կողմից՝ մարդու բիոլոգիզացիոն աշխատանքի դերը չհասկանալը մարդու եվոլյուցիայի պրոցեսում։

Նախկին կապկի մարդ գառնալու «աշխատանքային տեսությունը» (Ենգերլի), Զեռքի և վոտքի սիջե աշխատանքը բաժա-

նելու սաղմերը կապկի մոտ, Վորակական տարբերություն մարդու ձեռքի և մարդանման կապկի անդարդացած ձեռքի միջև

Վերին վերջավորության ազատվելը վորպես հետեւանք ուղղութիւնածքի:

Աշխատանքի գործիք պատրաստելու հնարավորությունը մարդու նախահայրերի կողմէց, Պիտիկանտրոպոս. նրա գանդի տարողությունն ու կազմության առանձնահատկությունները: Ուղեղի զարգացման առանձնահատկությունները: Հայդելբերգյան մարդու Սրնանորպ (չինական մարդ) և նրա տեխնիկան: Աշխատանքի գործիք արտադրելը՝ վորպես մարդու հիմնական տարբերությունը կենդանիներից: Ձեռքը վոչ միայն աշխատանքի գործիք և, այլ և աշխատանքի արդյունքը: Կապկանման նախահայրերի հոտային լինելը՝ գորպես մարդայնացման նախադրյալներից մեկը: Նեանդերթալյան կամ նախնադարյան մարդու նեանդերթալյու տեխնիկան (ներքին պալեոլիտ): Կրակից ոգտվելու և մորթեր գործածելու կարողությունը: Նեանդերթալյու պրոգրեսի անատոմիական գծերը (գանգի ավելի մեծ տարողությունը, ուղղագիտ դիրքը), վորոնք կազմակերպված են ավելի բարձր արտադրական կյանքի գոյությամբ: Մարդու խոսակցական լեզվի ծագումը՝ վորպես հետեւանք մարդու նախահայրերի աշխատանքային գործունելության համարակական ձեռքի բարգացման, նախնադարյան մարդու լայն տարածվածությունը յերկրագնդի վրա: Կրոմանիոնի ցեղը վորպես ներկա մարդու բրածո ձեւը, Կրոմանիոնի ցեղի կուտուրայի ավելի բարձր զարդացման աստիճանը (վերին պալեոլիտ) համեմատած առաջընթացների հետ:

Ժամանակակից մարդկային ցեղերի (ռասաների) միասնականությունը: Նախամարդու առանձին խմբերի զարգացումը յուրահատուկ բնական և առցիալ՝ տնտեսական պայմաններում: Այդ խմբերի հետագա խառնակումը գաղթումների ժամանակ:

Բարձր և ստորին ցեղերի մասին՝ կրոնական հեքիաթների և կեղծ գիտական տեսությունների ոգտագործումը բուրժուակայի կողմից՝ իրենց զարգութային շահագործական քաղաքականությունն արդարացնելու համար:

Դասակարգային կովի շարժիչ դերը մարդկային գտառակարգային հասարակության զարգացման մեջ: Դարվինյան գոյության կովի որենքը մարդկային հասարակության վրա տարածելու անթույլատելիությունը: Սոցիալական դարվինիզմի և բուրժուական ցեղալին տեսությունների հետագիմական դասակարգային եյությունը:

«Մարդու ծագումը» թեմայի հակալորնական և քաղաքա-

կան նշանակությունը: Լաբորատոր պարագմուն քններ, ցուցադրումներ, եքսկուրսիաներ:

1) Մարդու և վողնաշարավոր կենդանիների մարմնի կազմության տիպի համեմատությունը (առանձնապես կաթնասունների): 2) Ռուդիմենտար գործարանւերի դիտում: 3) Եքսկուրսիա գեղի մարդաբանական թանգարան (վորտեղ այդ չկա) գլուխալ տեղական թանգարան) նախամարդու տեխնիկան ուսումնասիրելու համար: 4) Դեմքի անկյունների և բարձրությունների ցուցիչների չափումներ կատարելի մարդու և կենդանիների գանգերի վրա (ժայրահեղ գեպօւմ նույնիսկ նկարի վրա):

5. ԿՅԱՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ ՑԵՐԿՐԻ ՎՐԱ (7 ԺԱՄ)

Իդեալիստական և մատերիալիստական հայացքներ կյանքի վերաբերյալ կրոնական ուսմունքի դասակարգային եյությունը կյանքի սկզբնավորման և նրա եյության մասին: Խնդնածնության գաղափարը և պայքար զրա լուսարանման գուհիկ պատկերացումների գեմ: Հարվեյի աշխատանքները, Ռենդիկ և Լ. Պաստյորի փորձերը, Կյանքի հավիտենականության տեսությունները, նրանց իդեալիստական եյությունը և անհեթեթությունը: Մեխանիստական հիպոթեզների ծագման մասին: Ժամանակակից քեմիական սկզբնական հիպոթեզը կյանքի ծագման մասին: Կյանքի սկզբնական ձևերի հիմնական հատկությունները: Բարդ որգանական միացությունների արհեստական սինթեզի նշանակությունը, կյանքի նյութականությունը և հատուկ «կենսուժի» կրոնական իդեալիստական ուսմունքի անհեթեթությունը ուղացուցելու համար:

Լաբորատոր պարագմուն քններ և ցուցադրումներ:

1) Փորձեր, վորոնք ցույց են տալիս, վոր չի կարելի շարժումներում վորպես կյանքի բնորոշ հատկանիշ, հաւաքանալով այդ վորպես տեղափոխություն տարածության մեջ: Որինակ՝ գիտել սննդիկի կաթիլների շարժումն Այդ շարժումն արագացնելու համար կաթիլներով ավելացնել ազտական թթու և ցանել յերկրորմաթթվատական կալիում: Ավելի հասարակ փորձ և հանդիսանում կամֆորայի կտորի շարժումը ջրի մեջ՝ նրա և կամֆորայի արանքում մակերեսային լարվածության տարբերության հետեւանքով, և կամ յուղի կաթիլի շարժումը սողայի թույլ լուծույթի մեջ:

2) Զուգահեռ կերպով դիտել յերկրորդ յերեսութեք, վարը

շույց և տաղթո, թե չի կարելի կյանքի ընսրոց հատկանիշ ընդունել աճումը, հասկանալով այդ սոսկ ծափալի աճումը, Փիզիկո-քիմիական պրոցեսների հետեանքով: Պահարջառպի լուծույթի մեջ ձգել գեղին արյունացին աղի բյուրեղներ:

Ներկա պայմաններում ինքնածին կերպով կյանք առաջանաւու, անհնարինության հարցն ուսումնասիրելիս կատարել բուրուր գասագրքերից հայտնի Կաստորի փորձերը: Գետք և ընդդժել վոր Պատայորի փորձերը վիդալիստների կողմից ոգտագործվեցին, աշխատելով գրանով բացատրել կյանքի հավիտենականության տեսությունը: Նկատի ունենալով այս պրոբլեմի բարգությունը, ծրագիրն առաջարկում է աղակերտներին բերել հետեյալ յեզրակացություններին.

1) Կյանքը գոյություն և ունեցել վոչ հավիտենագես և առաջացել և յերկրի վրա վոչ ստեղծագործական ակտով, ինչպես սովորեցնում ե կրոնը, այլ անկենդան նյութի զարգացման հետեանքով, աբուաքին նպաստավոր պայմաններ առաջանալուց հետո:

2) Կյանքը հնարագոր և արտաքին վորոշ գոյմանների առաջնությամբ:

3) Աղակերտների առաջ պետք է բաց անել կյանքի հավիտենականության հիպոթեզի հետազիմական վիդալիստական եյությունը և ցույց տալ հարցի մեխանիստական զարգացման գեմպայքարելու անհրաժեշտությունը:

«Կյանքի ծագումը» թեման մշակելու հիմնական մեթոդը պետք է հանգիստա դասախոսություն - զրուցը, ամրացնելով այն՝ գրքի վրա աշխատելով:

ԿՐԵՌԵԹՅՈՒՆ (Հ ԺԱՄ)

ԱՇԽԱՏԱՆԻ ՀԱՇՎԱՌԻՄ (Յ ԺԱՄ)

Ք Ա Մ Ա

7-10 Դասարան

Օրենքորդ դասարան

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Սույն ծրագրին հիմք և ծառայում 6-րդ դասարանի ծրագրը, հաստատված Լուսժողկոմատի կողմից 1932 թ.: Այս ծրագրը թեթև կերպով փոփոխված և ե լրացված՝ քիմիայի դասընթացի սկզբունքը 6-ից 7-րդ դասարան փոխելու կապակցությամբ և վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտած աշակերտներին նվազ կամ առավել լրիվ չափով սկզբնական քիմիական գիտելիքների ծավալը տալու անհրաժեշտությամբ:

Քիմիայի ամրող կուրսի հիմնական խնդիրները միջնակարգ դպրոցում պարզաբանված են միջնակարգ դպրոցի ծրագրի բացատրականում (աես ստորե): Քանի վոչ լրիվ միջնակարգ միջնակարգի մի մասն և կողմում, յուրաքանչյուր առարկայի, ինչպես և քիմիայի դասառուն պետք և շատ լավ ծանոթ լինի միջնակարգ դպրոցի ծրագրային նյութի ընդհանուր ուղղությանը, բովանդակության ծավալին և դասավորությանը: Այդ պատճառով ել այս բացատրականում միջնակարգ դպրոցի քիմիայի ամրող կուրսի ընդհանուր սկզբունքային դրությունները չեն շարադրված, այլ պարզաբանված են միայն 7-րդ դասարանի կուրսի առանձնահատուկ խնդիրները:

7-րդ դասարանի քիմիայի դասընթացի հիմնական խնդիրներն են:

1. Ապահովել գիտելիքների վորոշ արջանի յուրացումը: Վորոշ հիման վրա հնարագոր լինի կառուցել հետեյալ ողակների դասընթացը (միջնակարգի բարձր դասարանները, տեխնիկումները):

Այս գիտելիքները աշակերտներին հնարագորություն պետք է տան հասկանալու շրջապատի բնության քիմիական յերեսությունը:

Ները, ինչպես արտադրության մեջ, նույնպես և առողյայում։ Մրանց են վերաբերում հետեւյալ գիտելիքները։

ա) Քիմիայի հիմնական որենքները (նյութի կշռի պահպանումը և բաղադրության անփոփոխությունը) և հասկացողությունները (ֆիզիկական և քիմիական յերեսույթներ, խառնուրդ և քիմիական միացություն, տարրալուծման, միացման և փոխարինման սետկիցիաներ)։

բ) Նախնական հասկացողություններ ելեմենտի և պարզ նյութի ատոմամոլեկուլային ուսմունքի և վալենտականության մասին։

գ) Զուր և նրա հատկությունները. ջրի վորակական և քանակական կազմությունը՝ թթվածին և ջրածին, նրանց հատկություններն ու ստանալու յեղանակները։ Որ և նրա բազադրությունը, աղոտ և ածխաթթու գաղ. առաջին հասկացողություն ոքսիդացման և վերականգնման սետկիցիաների մասին. բոցի բնույթի և հանքերից յերկաթ ստանալու մասին։

դ) Ոքսիդներ, հիմքեր, թթուներ, աղեր, այս միացությունների ամենակարևոր ներկայացուցիչները (կծու նատրիում, կծու կալիում, կիր, ծծմբական թթու, աղաթթու, աղոտական թթու), աղագոյացության յերկու պարզ գեպքեր։

2. Տալ նտինական հասկացողություն քիմիայի նշանակության մասին սոցիալիստական շինարարության մեջ։

3. Տալ նախնական ունակություններ և կարողություն։

ա) Քիմիական բանաձեները հասկանալու, գիտակցաբար հասարակ բանաձեները և հավասարությունները կազմելու, և նրանց վերաբերյալ հասարակ հաշիվներ կատարելու։

բ) Քիմիական անօթների, շտատիվների, այրոցների (ըսպիրտայրոց), գեղատան կշեռքների և կշեռքարերի հետ վարժել կարողանալ, կազմել պարզ սարքավորում, ուսակտիվների հետ վարչիկ կարողանալ և նույնպես կատարել տարրական մանիպուլիացիաներ. քամիչների պատրաստում, քամել գոլորշիացներ. անհրաժեշտ նախազգուշական միջոցներ պահպանելով զագեր հավաքեր։

գ) Վոչ բարդ խնդիրներ վճռելու համար փորձից ոդուվել կարողանալ, փորձի և դիտողությունների արդյունքները, ինչպես և արդյունքների հիման վրա յեզրակացությունները կարծ և հասկանալի կերպով բանաձենել. զրավոր և բանավոր բանաձեներ կազմել։

դ) Գործիքների գծագրերը կարդալ կարողանալ. և զրագիտաբար պատկերացնել պարզ սարքավորումները և գործիքները։

Այս լինդիրներն իրականացնելու նպատակով գասատուն պետք ե յուր աշխատանքների մեջ ունենա հետևյալ մեթոդական պահանջները։

1) Քիմիայի ուսուցումը պետք ե ընթանա կանոնավորացիս կատարած դիտողությունների և փորձերի հիման վրա. ծըրագրում թված լար. աշխատանքներն ու գեմոնստրացիաներն անպայմանուրեն պետք ե կատարվեն. խոսք լինել կարող և միայն մի փորձ մի այլ նման փորձով փոխարինելու մասին, յեթե դըրանք չեն կարող կատարվել սարքավորման կամ այլ պայմանների պատճառով։

2. Բոլոր հիմնական հասկացողությունների և որենքների բանաձեւելուն պետք ե նախորդեն կոնկրետ փաստերի դիտումները. Վորոշումները պետք ե մտցնել միայն այն ժամանակ, յերբ ուսուցիչը համոզված կլինի, վոր ալյալ վորոշման երությունը կարող և հասկացվել բոլոր աշակերտների կողմից նախորդ ուսումնասիրությունների ընթացքի. հիման վրա. Հասկացողություններն ու որենքները հաճախ պետք ե կիրառվեն հետագա ուսումնասիրությունների ժամանակ և առանձին ստագիոններուն ընդարձակվեն ու խորացվեն։

3. Դասավանդումն ելեմենտար պետք ե լինի. տեսական հաբցերը պետք ե շարադրվեն աշակերտներին մատչելի ձևով։

4. Քիմիական լեզվի ուսումնասիրությունն ինքնանպատակ չպետք ե լինի և հանգի միայն բանաձեւերն ու հավասարություններն անդիք անելուն։ Ծրագրում ցուց են արված քիմիական լեզվի ուսումնասիրության առանձին ետապները։

Քիմիական լեզվից անժամանակ և անշնորհք կերպով ոգարվելը հաճախ աշակերտների մեջ ստեղծում է քիմիայի մասին երրե «դժվար» առարկայի, սխալ պատկերացում։

5. Ուսուցման նյութն անցնելիս ցանկալի յե համապատասխան տեղերում ոգտագործել քիմիայի պատմության ամենավառ մոմենտները, բայց վոչ թե պատմական տեղեկությունների ձեռվով, այլ իբրև կանգակ կուրսը ամեղնագործելու համար։

6. Դասատուն աշխատանքի ժամանակ պետք ե կապի քիմիայի տեսական և փաստացի նյութերը սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ, առանձնապես քիմիական արդյունաբերության բնագավառում։

7. Ասրողի ԽՍՀՄ-ի համար այս ծրագրով չեն կարող նախատեսվել առանձնակի մոմենտները. Բայց նրանք տեղ պետք ե գտնեն դարձնական աշխատանքների ժամանակ, Ուսուցման ժամանակ անհրաժեշտ ու ոգտագործել ավյալները տեղական քիմիական գործիքները։

միական արքյունաբերության մասին, քիմիական նյութերի մատակա հանգալավայրերի մասին և այլն:

Կուրսի առանձին թեմաների մասին միթողական ցուցումներ չեն տրվում այս տեղեկագրում, քանի վոր այսպիսի ցուցումներ կան հրատարակված մեթոդական գրականության մեջ (տես ցուցակը 8—10 դասարանների ծրագրերի բացատրականում):

Ռ Ք Ա Գ Ի Բ

1. ՆՅՈՒԹԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ

Նյութեր և նըանց հատկությունները: Խառնուրդներ և մաքուր նյութեր: Ֆիզիկական և քիմիական յերևույթներ: Տարրալուծման և միացման ռեակցիաներ: Քիմիական ռեակցիայի որինակները բնույթյան և արտադրության մեջ: Նախնական հասկացողությունները քիմիական արտադրության և քիմիական գիտելիքների նշանակության մասին սոցիալիստական անտեսության մեջ:

Լաբորատոր աշխատանքներ և դեմոնստրացիաներ:

ա) Զանազան նյութերի դիտում և ծանոթություն լաբորատորիայում ռենցիած նյութերի կարեռ հատկություններին:

բ) Խառնուրդի և մաքուր նյութի զանազանները: Խառնուրդներն անջատելու պարզ յեղանակներ—նստեցում (որինակ՝ թեփ և ավաղ), լուծել քամել և գուրգիացնել (որ, կեղտոտ կերակրաղի մաքրելը), թորում, (գորևե ներկված ջրային լուծույթի թարումը):

գ) Ֆիզիկական և քիմիական փոփոխության որինակներ՝ տաքացնել հախճապակու մի կտոր, յերկաթյա և պղնձի թիթեղներ կամ լարիր, մագնիումի ժապավեն, շաքարի մի փոքրիկ կտոր կամ պղնձարջասպի բյուրեղ, խառնել նյութերի այնպիսի լուծույթներ, վորոնք փոխադրեցության ժամանակ տալիս են դունավոր նյութեր և այլն:

դ) Ածխապղնձական (մալաքիթ) աղի և սնդկական ոքսիֆիտարալումը:

ե) Ծծմբի և յերկաթի խառնուրդ և միացություն (կտոր ծծմբի և մի այլ մետաղի):

2. Ջ Ո Ւ

1) Զուրը բնության և արտադրության մեջ, ջրի մաքրելու

Մաքուր ջրի ֆիզիկական հատկությունները (կազ ֆիզիկայի հետ):

2. Առաջին հասկացողություն լուծույթների մասին: Նրանց տարրերությունը պղտոր հեղուկներից: Պինդ նյութերի ջրային լուծույթները: Հագեցած և չհագեցած լուծույթները. լուծելիություն, լուծելիության կախումը բարեխառնությունից: Նյութի անջատվելը լուծույթից՝ լուծիչի բարեխառնության փոփոխության և գոլորշիացման դեպքում: Առաջին հասկացողություն բյուրեղային և ամորֆ վիճակի մասին: Հասկացողություն հեղուկների և գաղերի լուծելիության մասին:

Լաբորատոր աշխատանքներ և դեմոնստրացիաներ:

ա) Զրում թափահարել գործնականորեն անլուծելի նյութեր (որ, ծծմբաթվուտային բարիում և ավաղ), սակավալույթ նյութեր (գիպս, կիր) և լազ լուծելի նյութեր (սալպետր կամ պաղեղ, կերակրի աղ). Սակավալույթ և չլուծվող նյութերի անջատելը քամելու և ֆիլտրատը գոլորշիացնելու միջոցով:

բ) Հագեցած լուծույթներ ստանալը (որինակ սալպետրի կամ պաղեղի, կերակրի աղի), տաքացնելու ազգեցությունը լուծելիության վրա:

շ) Սալպետրի կամ պաղեղի անջատումը՝ լուծույթը սառեցնելու դեպքում:

դ) Յուղը ջրում թափահարելը և սպիրտը լուծելը:

ե) Զրում լուծված ողի անջատումը (փորձը կատարել փորձանակով):

զ) Զրի վորակական հատկությունը: Զրի տարրալուծումների առաջարական հոսանքով, Զրածնի անջատումը ջրից՝ նրա վրա մեապղով աղղելու զեպքում: Տեղակալման ռեակցիա:

կար. աշխատանքներ և դեմոնստրացիաներ:

ա) Զրի տարրալուծուների առաջարական հոսանքով հասարակ գործիքի մեջ. Զրածնի թթվածնի հայտնաբերումը (դեմոնտր.):

բ) Զրի տարրալուծումը կալցիումով կամ այլ մետաղներով (մագնիումով, յերկաթով, ծալրանեղ դեպքում՝ նատրիումով):

3. ԹԹՎԱԾԻՆ ՑԵՎ ԶՐԱԾԻՆ

1. Թթվածնու թերապևտական աղից թթվածնու ստանալը: Հասկացողություն կատալիզատորի մասին: Թթվածնի հատկությունները: Արումը թթվածնի մեջ: Թթվածնի կիրառումը: Հասկացողություն տեխնիկական յեղանակով թթվածնի ստանալը մասին:

Լաբ. աշխատանքներ և դեմոնստրացիաներ.
ա) Բերտոլետյան աղից և նրա վորպես կատալիգատոր, մտնգան
պերօքսիդի խառնուրդից թթվածին ստանալը: ը) Ծծմբի, ածխի,
կարմիր փոսփորի, յերկաթի ալրումը թթվածնում:

2. Զրածին. ջրածին ստանալը: Զրածնի հատկությունները:
Զրածնի բոցը: Զրի գոյացումը թթվածնի մեջ ջրածնի այրման
գեղում: Շառաչող գաղի Զրածինն արտադրության մեջ և նրա
ստանալու տեխնիկական լեզանակները:

Լաբ. աշխատանքներ և դեմոնստրացիաներ. ա) Զրածնի ստանալը՝ ցինկով ծծմբաթթվի վրա աղղելով. Զրածնի
մաքրության ստուգումը. լուծութիւնի մեջ ցինկ արջասպի հայտ-
նաբերելը. բ) Զրածնի թեթևությունն ապացուցող փորձեր (դե-
մոնստրացիա). գ) Զրածնի և ողի խառնուրդը թիթեղյա անո-
թում պայթեցնելը (գեմ). դ) Զրածնի այրումը թթվածնի մեջ և
ջրի գոյանալն այդ ժամանակ:

4. ԱՌԱՋԻՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԵԼԵՄԵՆՏԻ ՄԱՍԻՆ

Բարդ և վոչ բարդ նյութեր: Առաջին հասկացողություն ե-
լեմենտի և պարզ նյութերի մասին: Ալեմաշատ տարածված ելե-
մենտներ և վոչ մետաղներ:

Լաբ. աշխատանքներ և դեմոնստրացիաներ.
Պարզ նյութերի ցուցադրում. մետաղներ (ալյումին, յերկաթ,
կալիում, մագնիում, պղինձ, նատրիում, նիկել, անագ, կապար,
արծաթ, ցինկ), մետաղական փայլ, ջերմության և ելեկտրակա-
նության լալ հաղորդելու հատկություն. վոչ մետաղներ թթվա-
ծին, ծծումը, փոսփոր, քլոր, բրոմ, յոդ (գույնը, հոտը).

5. ՆՅՈՒԹԻ ԿՇՈՒԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՐԵՆՔԸ, ՈԴ

1. Մետաղների փոփոխությունը շիկացման գեղքում: Մե-
տաղներն ողում և փակ անոթում կշռելով տաքացնելը: Կշռի փո-
փոխությունը առաջին և անփոփոխ մնալը յերկրորդ զեղքում:
Կառուցել հիպոթեզ այն մասին, վոր սեհակցիայի մասնակից
նյութերի կշռը ստացված նյութերի կշռին և հավասար: Մի
շարք այլ փորձերի հիման վրա ստուգում: Կարծեցյալ հակասու-
թյուն այրման սեհակցիայի և կշռը պահպանելու հիպոտեզի մի-
ջև: Հայոնաբերել, վոր և այս սեհակցիան հաստատում և հիպո-
թեզը: Նյութերի կշռի պահպանման որենքը: Նյութի հավիտենա-
կանությունը:

Լաբ. աշխատանքներ և դեմոնստրացիաներ.

ա) Զանազան ոքսիդացող մետաղների շիկացումն ողում
վտարելու ողակներ վերցնում են տարրեր մետաղներ. յերկաթ,
պղինձ, կապար, ցինկ). Կշռի ավելացման հայտարերումը: բ) Նույն մետաղների (նույն ողակներով) շիկացումը փակ անոթում:
Կշռի պահպանման և ողի ծափալի փոքրացման հայտարերումը:
գ) Կշռի վրա կշռված նստվածքը տվող լուծույթները խառնելը
(տարրեր ողակներ տարրեր գույզ լուծույթներ են վերցնում): դ)
Զրի և ածխաթթու գաղի հայտնարերումը մոմի այրման ժամա-
նակ: է) Մոմի այրելը կշռելով վրա՝ այրման պլոտուկտների կա-
նումով (դեմոնստրացիա):

2. Ողի մասնակցությունն այրման, ժամանական և գոյաց-
ման պրոցեսների ժամանակ: Ողի միայն մի ժամանակ ծախսվելն
այդ գեղքում: Հաստատել վոր այդ պրոցեսներում մասնակցում
և թթվածինը Մետաղի և ջրի գոյացումը՝ առաքացրած մետաղոք-
սիդի վրայով ջրածին անցկացնելիս: Լառաղելի կատարած ողի
առաջին անսալիդը: Ողն իրուկ գաղերի խառնուրդ: թթվածնի ծա-
վալի վորոշումը՝ ողում փոսփոր այրելով: Աղում: Ածխաթթու
գաղը և ջրային գոլորշիներն ողում: Փոշին, մասնավորապես ար-
տադրական փոշին ողում: Բներտ գաղերի և նրանց կիրառման
մասին համապու տեղեկություն:

Լաբ. աշխատանքներ և դեմոնստրացիաներ. ա) Տաքացնելը փորձանակում կամ խողովակում ջրածնի ներկայու-
թյամբ: բ) Մոմփորի այրումը բաժանմունք ունեցող զանգի
տակ (գեմ.):

6. ԲԱՂԱՋԻՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՐԵՆՔԸ

1. Զրի կշռային բաղադրությունը. այդ որենքի հաստատու-
մը Գեյ-Լույսսակի կողմից: Զրի կշռային բաղադրության ապա-
ցուցումն ելեկտրական հոսանքի ողնությամբ այն տարրալուծելով:
Հասկացողություն վերլուծության (անալիզ) և համազրության
(սինթեզ) մասին:

Լաբ. աշխատանքներ և դեմոնստրացիաներ. Զրածնի և թթվածնի խառնուրդի պայթեցումը և վիճիռմետրում
(գեմ.):

2. Բաղադրության հաստատումն թյան որենքը:

3. Յերկու ելեմենտի տարրեր միացությունների կշռային
բաղադրությունը: Զրածնի պերոքսիդ տարրալուծելը՝ տարրց-
ներով և կատալիզատորների ներդրությամբ: Այլ որինակներ,
պղնձային և պղնձական ոքսիդ, կապարոքսիդ, կապարդիոքսիդ
և այլն:

8. ՈՐՍԻԴԱՅՈՒՄ ՑԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Ողում և թթվածնի մեջ այրվելն իբրև ոքսիդացման ռեակտիվայի որինակ: Ոքսիդոների մասին առաջին հասկացողությունն այն Պարզ և բարդ նյութերի այրվելը (ոքսիդների գոյացումն այն գեղքում): Այրման հասկացողության ձգտումը: Բոցավառման բարեխառնությունը: Այրման ռեակցիայի նշանակությունը արտադրության մեջ: Հասկացողություն փայտի չոր թորման մասին: Բոց: Բոցի կազմությունը:

Լաբ. աշխատանքներ և գեմոնստրացիաներ, ա) Ջրածնի այրումը թթվածնում և թթվածինը՝ ջրածնում (գեմ.): բ) Մի քանի նյութերի բոցավառման բարեխառնության տարրերությունը (որ. Փոսֆորի, նավթի, կերոսինի և մագնիսի: գ) Փայտի չոր թորումը (փորձնականում): դ) Սպիրտայրոցի և մոմի բոցերի կազմությունը:

1. Շմոլ: Գիներատորային գազ:

2. Գիմնոսրացիաներ: Շմոլ ստանալը (ածխաթթու գազի և շիկացրած ածխի փոխներգործության ռեակցիան (և այրելը):

3. Դանդաղ ոքսիդացում: Ոքսիդացումն արտադրության և քնության մեջ: Պայքար մետաղների ժանգուման զեմ:

4. Վերականգնման ռեակցիա: Վերականգնման որինակներ ջրածնով, ածխով և ջմուռով: Ոքսիդացման—վերականգնման պրոցեսի մասին հասկացողություն: Վերականգնման ռեակցիայի կերառումը մետաղագործության մեջ: Բարձր հնոցային պրոցեսի մասին համառոտ տեղեկություն:

Լաբ. աշխատանքներ և գեմոնստրացիաներ, ա) Պղինձ ոքսիդի կամ կապար ոքսիդի վերականգնումն ածխով: բ) Պղինձ ոքսիդի վերականգնումը շմոլով (գեմոնստրացիա):

9. ՈՐՍԻԴԱՅՆԵՐ, ՀԻՄՔԵՐ, ԹԹՈՒՆԵՐ, ԱՂԵՐ

1. Ոքսիդների գոյացումը: Ոքսիդների բանաձևերը, առաջին հասկացողություն վակինտականության մասին:

